

Ա.Ա.Պուծին

891.71
Դ-97

Spencer

15/5/1938-10





1100000000000000

А.С.Пушкин

Путешествие в Арзрум



1937

— Госиздат —

891-71
7-97

шр

И.И.Потечин

19 NOV 2010

Ճանապարհովով Դեպի Արզրում



1937

— meslru —

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐՁՐՈՒՄ 1829 ԹՎԱԿԱՆԻ
ԱՐԵԱԿ ԱՆԳԻ ԺԱՄԱՆԱԿ

ԱՐԱՋԱԲԱՆ

Նորես ձեռքս ընկալ անցյալ 1834 թվականին Փարիզում տպած մի գիրք, վրա անունն էր Voyages en Orient entrepris par ordre du Gouvernement François I).

Թուրքական արշավանքում յեղած բանաստեղծներից յես գիտեյի միայն Ա. Ս. Խոմյակովի և Ա. Ն. Մուրավյովի մասն; Ցերկուուն ել գտնվում ելին կոսմ Դ. Բիչի բանակում: Առաջնուն, այն ժամանակ գրեց մի քանի գեղեցիկ լիրական վոտանավոր, յերկոտրդը կազմում եր իր ճանապահությունը գենք սուրբ փայտերը վորոն այնքան ուժեղ տպավորություն գործեց, Բայց յես չեմ կարդացել և վոչ մի սատրիա Արդրումի արշավանքի մասն:

Պոշտի կերպ յես չելի կարող մտածել վոր այստեղ խոսքն իմ մտախն եւ, յեթե նույն այդ գրքում յես չւանելի իմ անունը՝ առանձին Կովկասյան կորպուսի գէներալների անունների շարքում:

Parmi les chefs qui la commandoient (*l'armée du Prince Paskèwitsch*) on distinguoit le Général Mouravief... le Prince Georgien Tsitsevaze... le Prince Armenien Beboutof... le Prince Potemkine, le Général Raiewsky, et enfin— M. Pouchkine ... qui avoit quitte' la capitale pour chanter les exploits de ses compatriotes³⁾:

Խոստովանում եմ, Քրանոսական ճանապարհորդի՝ այս տողերը, չնայած գովասանական ածականներին, ինձ համար չատ ավելի՝ անախորդ ել, քան առաջական ժուրնալները հայոցանքը Վոզելից առաջըստ փութելիք ինձ միշտ ծըծաղելի և անհեթեթ քահանա ծույք և թվայել. — Գովեռությունը չես գտնի. նա ինքը պետք է գտնի բանաստեղծին: Գալ պատերազմ՝ գտլիք սիրաքործությունները գովերեւելու նպատակով, ինձ համար կը ներ մ, կողմից չափազանց ինք-

1 <Ճանապարհորդություններ գեղիլ Արևելք, ձեռնարկված փրանսական կառավարության ճանաչման արարությամբ>;

2) <Հարուսա յերևակայությամբ ոժտված մի պոետ, այն փառակղոր գործերում, վոր նրան վլաճակած եր դիտել, դտել եր սյուժետ վոչ պոեմի, այլ սատիրալ, համար>

Յ/Նըա (իշխան Պատկերչի բանալի) հըամանատարների շաբթում աչքի
յին ընկուռմ գեներալ Մուրավյովը ... Վրայի իշխան Ցէշկանեն... Հայ իշխան
Բենետով թուզ . իշխան Պոտյովիկինը, զեներալ Ռայկոսկին և վերջապես Պուշ-
կինը... վրա թողել եր մայրաքաղաքը վորպեսզի յերդի իր հայրենակիցների
սիրագործությունները՝

նասիրական, մյուս կողմից չափազանց անվայել մի բան: Յես չեմ միշտում ուղարկան դատողություններին: Դա իմ գործը չեմ: Մի գուցե Սողանլույի բարձունքներով խիզախուեն անցնելը, գորով կոմս Պակելիչը սերակերին կտրեց Ոսման-վաշայից, մեկ որ ու դիշերվա ընթացքում թշնամու յերկու կորպուսներին պարտություն հասցնելը, նրա արագ արշավանքը գեպի Արզում, այս բոլորը, վոր լիակատար հաջողությամբ պսակվեց, մի գուցե, և չափազանց արժանի յետաղանքի վիճական մարդկանց աչքում (վորպիսիք են, որինակի համար, պ. առետրական հյուպատոս Թոնտանյեն, ձանապարհորդություն դեպի Արևելքի հեղինակ): —բայց յես կամաչեյի սատիրաներ գրել մեծահնչակ մի գորավարի մասին, վոր սիրավը ընդունեց ինձ իր վրանի հովանու տակ և իր մեծամեծ հոգսերի մեջ ժամանակ եր գտնում ցուցաբերելու դեպի ինձ հաճելի ուշադրություն: Այս մարդը վոր ուժեղների հովանավորության կարիքը չունի, բարձր ե գնահատումներանց սիրավերությունն ու հյուրասիրությունը, վորովնեան նրանցից ուրիշ բան չի կարող պահանջել: Մեղաղանքն անշնորհակալության մեջ չպիտի մնա առանց առարկության, վորպես ամհան քննադատություն, կամ զրական հայոյանք: Ահա ինչու յես գնուցի տպել այս առաջարանը և լույս ընծայել իմ ժամբորդական նոթերը, վորպես այն ամենը, ինչ յես գրել եմ 1829 թվականի արշավանքի մասին:

Ա. ՊՈՒՇԿԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Տափաստանները: Կալմիկական վրան: Կովկասյան ջրեր: Ռազմա-վիրական ճանապարհ: Վաղիկավկադ: Ոսական թաղումը: Թերեք: Դարիալի կիրճ: Զրունապատ լեռներով անցնելը: Առաջին հայացք Վրաստանի վրա: Զրանցք-ներ: Խոզովլ-Միրզան: Դուշեթի քաղաքապետը:

...Մոսկավից յես գնացի կալուգայի, Բելեվի և Որյովի վրայով, և այդպիսով անցա ավելորդ յերկու հարյուր վերսա, դրա փոխարքեն տեսա ...—ին [Յերմոլովին]:

Նա ապրում ե Որյովում, վորի մոտ գտնվում ե նրա գյուղը: Յես յեկա նրա մոտ առավոտյան ժամը 8-ին և նրան տանը չգտա: Իմ կառապանն ինձ ասաց, վոր Յերմոլովը վոչ վոքի մոտ չի լինում, բացի իր հորից, վորը մի պարզ, ասավածասեր ծերունի յե, վոր նա վոչ թե մենակ քաղաքի աստիճանավորներին ե ընդունում, այլ նա մատչելի յե ամենքի համար: Մի ժամից հետո յես նորից յեկա նրա մոտ: Յերմոլովը ինձ ընդունեց իր սովորական սիրալիրությամբ: Առաջին հայացքից յես ամենափոքը նմանություն անգամ չգտա նրա և նրա պատկերների միջև, վորոնք սովորաբար նկարված են պրոֆիլով: Յերեսը կլոր, կրակոտ, գորշ աշքեր, ալեզարդ մազերը ցից-ցից: Վազրի գլուխ հերկուեայան իրանի վրա: Ժակիտն անախորժ ե, վորով-հետեւ անբնական ե: Իսկ յերբ մտասուլվում ե և խոժուալում, նա գեղեցկանում ե և զարմանալի հիշեցնում ե Դովի նկարած բանաստեղծական պատկերը: Նա չերքեղի կանաչ չեքմեն եր հագած: Նրա առանձնասենյակի պատերի վրա կախված եյին թրեր և դաշտաներ՝ հիշատակներ կովկասում կառավարչապետ յեղած ժամանակից: Նա իր անգործությունն ըստ յերեսույթին անհամբերությամբ ե տանում: Մի քանի անգամ նա սկսեց խոսել

Պասկեիչի մասին և միշտ կծու։ Խոսելով նրա հաղթությունների հեշտության մասին, նա նրան համեմատում եր Հեսու Նավիայի հետ, փորի առաջ պատերը թափում եյին փողորի հնչյունից և Յերեւանյան կոմսին անվառում եր Յերիքոնյան կոմս։ Թող հանդիպի նա, առում եր Յերմոլովը, մի վոչ խելոք, վոչ հմուտ, բայց համառ փաշայի, որինակ այն փաշային, վոր հրամանատար եր Շումլայում և Պատկեիչը կորած է։ Յես հաղորդեցի Յերմոլովին կոմս Տոբառուի խոսքերը, թե Պատկեիչն այնքան եր լավ գործում պարսկական կամպանիայում, վոր խելոք մարդուն կը մնար միայն ավելի վատ գործել նրանից տարբերվելու համար։ Յերմոլովը ծիծաղեց, բայց չհամաձայնեց։ Կարելի յեր խնայել մարդկանց և ծախսերը, ասաց նա։ Կարծեմ նա գրում ե կամ ուզում ե գրել իր հիշողությունները։ Նա դժգոհ ե Կարամզինի պատմություննից, և կկանենար, վոր մի բոցավառ գրիչ նըշ կարգրեր, թե ինչպիս ոռու ժողովուրդը վոչնչությունից հասել ե փառքի ու հզորության իշխան Կուրբակու գրառումների մասին խոսում եր նա սոն ամոր¹⁾։ Գերմանացիներին լավ տեսել ե։ Մի հիսուն տարուց հետո, ասաց նա, այնպես կկարծեն, թե ներկա արշավանքին մասնակցել ե պրուսական կամ ավստրիական ոժանդակ մի ռանակ, այս և այս գերմանական գեներալների հրամանատարությամբ։ Յես նրա մոտ ու ացի յերկու ժամ։ Նրանտեհաճություն եր պատճառում, վոր չեր հիշում իմ լրիվ անունը։ Նա ներողություն խնդրեց կոմպլիմենտներ ասելով։ Մի քանի անգամ խոսք բացվեց գրականության մասին։ Գրիբուեդովի վոտանավորների մասին նա ասում է, վոր նրանց ընթերցումը ցավեցնում ե ընթերցողի այտուկրները։ Կառավարության և քաղաքականության մասին վոչ մի խոսք չեղավ։

Իմ ճանապարհը Կուրսիկ և Խարկովի վրայով եր։ — բայց յես շուր տվի ուղիղ գեափի Թիֆլիսի ճանապարհը, զոհելով մի լավ ճաշ Կուրսիկ պանդոկում (վոր աննշան բան չե մեր ճանապարհորդությունների ժամանակ) և չհետաքրքրվելով ալցել ։ . . . [Խորկովի համալսարանը, վոր չարժե Կուրսիկ ճաշարանին]։ Մինչև Յելեց ճանապարհները սարսափելի յեն։ Մի քանի անգամ իմ կառքը խրվեց ցեխի մեջ, վորը համարժեք ե Ողեսսայի ցեխին։ Պատահում եր, վոր մեկ որ ու գիշեր յես անցնում եյի

1) <հրապարանքով>

վոչ ավելի, քան հիսուն վերստ։ Վերջապես յես տեսա վորոնեժյան տափաստանները և ազատ սլացա կանաչ դաշտավայրով։ Նովոչերկասկում գտա յես կոմս Պուշկինին], վոր նույնպես գնում եր Թիֆլիս, և մենք համաձայնեցինք միասին ճանապարհորդելք

Յեվլոպայից Ասիա անցնելը ժամ առ ժամ ավելի զգալի յե դառնում — անտառներն անհետանում են, բլուրները հարթվում խոտն ավելի խիտ և դառնում և ցույց ե տալիս աճեցողության ավելի մեծ ույժ, յերեսում են թոշուներ, վորոնք անհայտ են մեր անտառներում, արծիվները նստած են մեծ ճանապարհը նշող հողակույտերի վրա, ասես պահանջներ լինեն և հպարտ նայում են ճանապարհորդներին։ Կալմիկները տեղավորված են կայարանի խրճիթների մոտ։ Նրանց վրանների մոտարածում են նրանց անձոռնի, ըրդոտ ձիերը, վորոնք ձեզ ծառթ են Որովզկու գեղեցիկ նկարներից։

Մոտ որերս յես ալցելեցի մի կալմիկական վրան (հյուսած ցանկապատ, վրան սպիտակ թաղիք քաշած)։ Ամբողջ ընտանիքը պատրաստվում եր նախաճաշելու։ Կաթսան յեփում եր մեջտեղում, և ծուխը դուրս եր գալիս վրանի վերեսում բացված անցքից։ Մի ջանել կալմիկունի, բավականին սիրունադեմ, կար եր անում, ծինելով ծխախոտ։ Յես նստեցի նրա մոտ։

Անունդ ինչեւ . . . Քանի տարեկան եւու Տաս և ութիւն ինչ ես կարում։ Վարտիք։ Ում համար։ Ինձ համար։ Նա տվեց ինձ իր ծխամորճն ու սկսեց նախաճաշել։ Կաթսայում յեփում եր թիյ վոչխարի ճարպով ու աղով։ Նա առաջարկեց ինձ նաև իր փարչը։ Յես չեյի ուղում հրաժարվել, և խմեցի մեկ շնչով։ Զեմ կարծում, թե ժողովրդական մի այլ խոհանոց կարողանար արտադրել ավելի գարշելի բան։ Յես խնդրեցի մի բան վրայից ուտելու։ Ինձ տվին մի կտոր չորացրած զամբիկի միս։ Յես դրանից ել գոհ ելի։ Կալմիկական կոկետությունը վախեցրեց ինձ։ Յես շուր գուրս յեկա վրանից և հեռացա տափաստանի կիրկելից։

Ստավրոպոլում յես տեսա յերկնքի ծայրին ամպեր, վորոնք ապշեցրել եյին իմ հայացքը ճիշտ իննը տարի առաջ։ Նորանք ելի նույն երին, ելի նույն տեղում։ Կովկասիան շղթավի ձյունապատ գագաթներն եյին դրանք։

Գեորգինեսկից յես գնացի Տաք ջրերը, Այստեղ յես մեծ փոխություն գտա։ Իմ ժամանակ վաննաները դանլում եյին

շտապ շինված խղճուկ հյուղերում։ Աղբյուրները, վորոնք մեծ մասամբ գտնվում եյին իրենց նախնական վիճակում, խփում եյին, ծխում ելին և սարերից հոսում եյին զանազան ուղղություններով, թողնելով իրենց յետերից սպիտակ և կարմիր հետքեր։ Մենք յեռացող ջուրը վերցնում ելինք կեղեկից շինած փարչով կամ թիւ կոտրած շիւ տակով։ Հիմա հիանալի վաննաներ և տներ են շինված։ Մաշուկի լանջին բուլվար ե գցած, վորի լեզերքը տնկված են լորենիներ։ Ամենուրեք՝ մաքուր ճանապարհներ, կանաչ նըստարաններ, կանոնավոր ծաղկանոցներ, փոքրիկ կամուրջներ, տաղավարներ։ Աղբյուրները պատած են քարով, վաննաների պատերին փակցված են վոստիկանության կանոնները։ Ամենուրեք կարգ ու կանոն, մաքրություն, գեղեցկություն...

Խոստովանում եմ, կովկասյան ջրերը հիմա ավելի շատ հարմարություններ ունեն, բայց յես ափսոսում ելի նրանց առաջի վայրենի վիճակը, յես ափսոսում ելի ժայռոտ գիրտ կածանները, թփուտներն ու չցանկապատած վիճերը, վորոնց վրայով, յես, յերեմի մագլցում ելի։ Տիսուր սրտով թողի յես ջրերը և վերադարձա Գեորգինուկ։ Շուտով վրա հասավ գիշերը։ Զինջ լերկինքը ծածկվեց միլիոնավոր աստղերով։ Յես գնում ելի Պոտկումուկի ափով։ Այստեղ եր, վոր յերեմի նստում եր ինձ հետ Ա. Ո. <ալիսկին>, ականջ դնելով ջրերի մեղեղուն։ Վեհապանծ Բեղաուն, հեռվում ավելի ու ավելի սկ եր գծաղրվում, շրջապատված լեռներով։ Իր վասալներով, և վերջապես անհետացավ խսկարի մեջ...

Հետեյալ որը մենք շարունակելով ճանապարհը հասանք Յեկատերինոգրադ, վոր մի ժամանակ փոխարքայանիստ քաղաք ե յեղել։

Յեկատերինոգրադից սկսվում ե ուազմավիրական ճանապարհը։ Փոստի ճանապարհը վերջանում ե։ Զիրե են վարձում մինչեւ Վլադիկավկազ։ Տրվում ե կողակների ու հետեւակ պահակախումբ և մի թնդանոթ։ Փոստն ուղարկում են շաբաթը լերկու անդամ և ճանապարհորդները միանում են նրան։ Պա կոչվում ե ոկազիա։ Մենք յերկար չսպասեցինք։ Փոստը յեկալ հետեյալ որը, և յերրորդ առավոտը ժամը 9-ին մենք պատրաստ ելինք ճանապարհ ընկնելու։ Հավաքատեղում միացավ ամբողջ քարավանը, վոր բաղկացած եր. 500 մարդուց կամ մոտ այդքան։ Թմբուկ զարկեցին։ Մենք շարժվեցինք։ Առաջից գնաց թնդա-

նոթը, շրջապատված հետեւակ զինվորներով։ Նրա յետեւից ձգվեցին կառքերը, մի բերդից մյուսը տեղափոխվող զինվորների կանանց ծածկասալվերը, մեր հետեւից ճոնչաց լերկանիվ սալլերի գումակը։ Յերկու կողմերից վազում ելին ձիերի յերածակներ և յեղների նախիրներ։ Նրանց մոտով արշավում ելին ուղեկցողները՝ յափնչիներով ու ողապարաններով։ Այդ բոլորն ինձ սկզբում շատ դուր եր գալիս, բայց շուտով ձանձրացրեց։ Թնդանոթը շարժվում եր քայլով, պատրույդը ծխում եր և զինվորները նրանով կպցնում ելին ծխամորճերը։ Մեր յերթի դանդաղությունը (առաջին որը մենք միացն 15 վերստ անցանք), անտառնելի շոգը, պաշարի պակասությունը, անհանգիստ գիշերները, նողայական սալլերի անընդհատ ճոնչոցը ինձ համբերությունից հանում ելին։ Թաթարները պարծենում են այդ ճոնչոցով, ասելով վոր նրանք գնում գալիս են վորպես ազնիվ մարդիկ, վորոնք թագնվելու կարիք չունեն։ Այս անգամ ինձ համար ավելի հաճելի կիներ ճանապարհորդել վոչ այդքան պատվավոր հասարակության հետ։

Ճանապարհը բավական միատեսակ ե. – հարթավայր. շուրջը բլուրներ։ Յերկնքի ծայրում կովկասի գագաթները, վոր որեցոր ավելի ու ավելի բարձր ելին յերեսում։ Բերդերը, վորոնք բավար են այս յերկրի համար, ունեն խրամատ, վորը մեզանից ամեն մեկը առաջի ժամանակները թոշելով կանցներ առանց թափանելու, ժանդուար թնդանոթներ, վոր չեն թնդացել ֆուգովիշի ժի ժամանակներից, վլած պատճեց, վորի վրա թափառում ե հավերի ու սագերի կայազորը։ Բերդերում կան մի քանի խղճուկ հյուղեր, վորտեղ դժվարությամբ կարելի յե ճարել մի տասնյակ ձու և մածուն։

Առաջին նշանավոր տեղը՝ Մինարեի բերդն ե. Նրան մոտենալիս, մեր քարավանն անցնում եր սքանչելի հովիտով, գերեզմանաթումբերի միջով, վորոնք ծածկված ելին լորենիներով ու շինարաներով։ Դրանք մի քանի հազար ժանտախտից մեռած մարդկանց գերեզմաններ ելին, Յերեւում ելին յերփներանգ ծաղկներ, վոր բուսել ելին վարակված աճյուններից։ Ա. Զ կողմում շողջողում եր ձյունապատ կովկասը. առաջից բարձրանում եր մի ահագին անտառապատ սար. նրա յետեւում եր գտնվում բերդը. նրա շուրջը յերկում ելին ավերված առվել հետքեր, վոր կոչվելիս ե յեղել ծատարտով և մի ժամանակ գլխավորն ե

յեղել Մեծ Կաբարդայում: Անհետացած գյուղի լերիմի գոյության մասին վկայում ե թեթև, մենավոր մինարեթը, վորը գեղակաղմ բարձրանում ե քարակույտերի մ/ջից, ցամաքած հեղեղատի ափին: Ներսի սանդուխքը դեռ չի քանդվել: Յես բարձրացա նրանով հարթակի վրա, վորի վրայից այլեւ չի հնչում մոլայի ձայնը: Այստեղ լես գտա մի քսնի անհայտ անունն եր, վոր աղյուսների վրա խղզել ելին փառասեր ճանապարհորդները:

Մեր ճանապարհը գեղատեսիլ դարձավ, Լեռները ձգվում եյին մեր վերևում: Նրանց գագաթներին սողում եյին հաղիվ նշմարելի հոտեր, վորոնք միջատների եյին նմանում: Մենք նշմարեցինք նաև հողին, վոր մի գուցեց և ոռւս ե՛ մի ժամանակ գերի ընկած և գերության մեջ ծերացած: Մենք ելի գերեզմանաթումքերի, ելի ավերակների հանդիպեցինք: Յերկու-յերեք գերեզմանաքարեր կանգնած եյին ճանապարհի յեղին: Այստեղ, ըստ չերքեզների սովորության, թաղված են նրանց ասպատակները: Քարի վրա փորագրված թաթարական արձանագրությունը, թրի պատկերը, թանգան, մնացել են հափշտակիչ թոռներին, վորպես հիշատակ՝ հափշտակիչ նախնու մասին:

Չերքեզները մեզ ատում են: Մենք քշել ենք նրանց լայնարձակ արոտատեղերից: Նրանց առւլներն ավերված են, ամբողջ ցեղեր բնաջրն յեղած: Նրանք հետպհետեւ ավելի յեն հեռանում դեպի լիոների խորքերը և այստեղից տարածում իրենց ասպատակությունները, Խաղաղ չերքեզների բարեկամությունը անվտանելի յե: Նրանք միշտ պատրաստ են ոգնելու իրենց վայրագ ցեղակիցներին: Նրանց վայրենի ասպետության վորին զգալիորեն ընկել ե: Նրանք հազվակեալ են հարձակվում հավասար թվով կողակների վրա, յերբեք չեն հարձակվում հետևազորի վրա և փախչում են, յերբ թնդանոթներ են տեսնում: Սակայն յերբեք առիթ չեն փախցնի հարձակվելու թույլ ջոկատի կամ անպաշտապանի վրա: Այս կողմերում շատ լուրեր են պտըտում նրանց չարագործությունների մասին: Համարյա թե վոչ մի հնար չկա նրանց զսպելու, մինչև վոր նրանց զինաթափ չանեն, ինչպես զինաթափ արին Ղրիմի թաթարներին, մի բան, վոր չափազանց դժվար ե, նրանց մեջ տիրող ժառանգական գժտությունների և արյան վրիժառության պատճառով: Դաշտույնն ու թուրը նրանց մարմի անդամներն են, և մանուկն սկսում ե տիրապետել նրանց ավելի առաջ, քան թոթովել Նը-

րանց համար սպանությունը—մարմի հասարակ մի շարժում ե: Գերիներին նրանք պահում են վրկանքի հուսով, բայց սարսափելի անգութ են վարդում հետաքրքը, հարկադրում են աշխատել ուժից վեր, կերակրում են հում խմորով, ծեծում են, յերբ խելքներին փչում ե, և նրանց մոտ պահակ են դնում իրենց տղաներին, վորոնք, մի խոսքի համար, իրավունք ունեն նրանց կոտորել իրենց մանկական թրերով: Նորեքս բռնել ելին մի խաղաղ չերքեղի, վորը կրակել եր սի գիւղորի վրա: Նու արդարացել եր նրանով, վոր նրա հրացանը չափազանց յերկար եր լցված մնացել: Ի՞նչ անես այդպիսի ժողովրդի հետ: Սակայն պետք ե հուսալ, վոր Սև ծովի արևելյան ափի գրավումը, կըտրելով չերքեզներին թուրքիայի հետ առևտուր անելուց, կհարկագրի նրանց մերձենալ մեզ: Ճոխության աղղեցությունը կարող ե նպաստել նրանց սանձահարման: — սամ վարը կարևոր նորամուծություն կլիներ: Կա ավելի ուժեղ, ավելի բարոյական, մեր զարի լուսավորությանն ավելի համապատասխան միջոց՝ գա ավետարանի քարոզումն ե: Չերքեզները շատ ժամանակ չե, վոր ընդունել են մահմեղական հավատը: Նրանք հրապուրվել են Ղօրտի առաջաների գործունյա ֆանատիզմով, վորոնցից աչքի ընկնողն ե յեղել Մանսուրը, մի արտակարգ մարդ, վոր յերկար ժամանակ ապստամբեցը ել կովկասը ոռուսական տիրապետության դեմ, վերջում բռնվել ե մեր կողմից և մեռել Սոլովեցկի վանքում: Կովկասն սպասում ե քրիստոնեական միսունիներների: Բայց մեր ծուլության համար ավելի հեշտ ե կենդանի խոսքի փոխարեն մեռյալ տառեր ձուկել և համը զրքերուղարկել գիր չճանաչող մարդկանց:

Մենք հասանք Վլադիկավկազ, նախկին Կաֆ-Կայա, լեռների նախաղուանը, Նա շրջապատված ե ոսական առւլներով: Յես այցելեցի նրանցից մեկը և հանդիպեցի թաղման: Խըճիթի մոտ խոնվել եր ժողովուրդը: Բակում կանգնած եր մի սայլ, յերկու յեղ լծած: Մեռյալի զգգականներն ու բարեկամները գալիս եյին ամեն կողմից և դառը լացով մանում եյին խրճիթը, բըռունցքներով զարկելով իրենց ճակատներին: Կանայք կանգնած ելին հանդարտ: Մեռյալին զուրս բերին յափնջու վրա,

...Like a warrior taking his rest
With his martial cloak around him.¹⁾

¹⁾ <Նա պատկած եր, փաթաթված իր մարտական թիկնոցի մեջ, վորպես հանդստացող զինվոր>:

որին սայլին: Հյուրերից մեկը վերցրեց հանգուցյալի հը-
րացանը, փշեց վառդարանից վառողնուու զբեց դիակի կողքին: Յեղները շարժվեցին: Հյուրերը գնացին յետերից: Մարմինը պետք
է թաղվեր լեռներում, առուից մի յերեսուն վերստ հեռավիրու-
թյան վրա: Ափսոս վոր վոչ վոք չկարողացավ բացատրել ինձ
սույն ծեսերը:

Ուսերն ամենաաղքատ ցեղն են Կովկասում բնակվող ժողո-
վուրդներից: Նրանց կանայք իշխանի յեն և, ինչպես ասում
են, շատ բարեհաճ են գեղի ճանապարհորդները: Բերդի դար-
պասի մոտ յես պատահեցի յերկուսին, մի բանտարկեալ ուի կնոջն,
ու աղջկան: Նրանք ճաշ ելին տանում նրա համար: Նրանք հան-
գիստ ու համարձակ ելին թվում, սակայն, յերբ յես մոտեցա-
յերկուսն ել խոնարհեցրին զլուխները և ծածկվեցին իրենց պա-
տառութված չաղրաներով: Բերդում յես տեսա չերքեղ ամանաթների
կայտառ և սիրուն տղաների: Նրանք ամեն ըոսե չարաձձիու-
թյուններ են անում և փախչում են բերդից: [Նրանց պահում
են վողբալի վիճակում: Նրանք ման են գալիս ցնցուտիներում,
կիսամերկ, և գարշելի կեղտոտության մեջ: Վոմանց վրա յես
տեսա փայտե վոտնակոճղեր: Հավանականորեն աղատ արձակ-
ված ամանաթները չեն ափսոսում իրենց Վլադիկավկազում
գտնվելու համար]:

Թնդանոթը մեզանից բաժանվեց: Մենք ճանապարհ ընկանք
հետեազորի և կողակների հետ: Կովկասը մեզ ընդունեց իր սըր-
բարանը: Մենք լսեցինք խուլ աղմուկ և տեսանք թերեքը, վոր
հոսում եր զանազան ուղղություններով: Մենք գնացինք նրա
ձախ ափով: Նրա աղմկալի ալիքները շարժում են ջնաբուշների
նմանող ցածրիկ ոսական ջրաղացների անխմերը: Վորչափ խո-
րանում ելինք մենք դեպի լեռները, այնքան ավելի նեղ եր
դառնում կիրճը: Մեղմված թերեքը մոնչալով նետում և իր
պղտոր ալիքները ժայռերի վրայով, վորոնք փակում են նրա ճա-
նապարհը: Կիրճը գալարվում ե նրա հոսանքի յերկայնությամբ:
Լեռների քարե ստորոտները նղկված են նրա ալիքներից: Յես
գնում ելի վոտով և ամեն ըոսե կանք ելի առնում, ապշած
բնության մոայլ սքանչելիքից: Յեղանակը մառախլապատ եր,
ամպերը ծանը շարժվում ելին սև գագաթների մոտով: Կոմո
Պ <ուշկինը> և Շ <երնվայլը>, նայելով թերեքին մտաբերում

եյին Իմատրան և գերադասությունը տալիս եյին Հյուսիսում
վորոսացող գետին: Բայց յես վոչ մի բանի հետ համեմատել չեյի
կարողանում իմ առաջ բացված տեսաբանը:

Լարս չհասած, իս յետ մնացի պահակախմբից, աչքերս
սկսուած այն վիթխարի ժայռին, վորոնց միջով զարկվում եր
թերեքը անմեկնելի կատաղությամբ: Հանկարծ դեպի ինձ և վա-
զում մի զինվոր, հեռվից կոչելով.—Մի կանցնեմ, Զ (Երդ) Բ (արեծը-
նունդուրյուն), կսպա նեն: Այդ նախազգուշացումը անսովոր լինելով
չափազանց տարրորինակ թվաց ինձ: Բանն այն ե, վոր ոս ավաղակ-
ները, այս նեղ տեղում անվտանգ զգալով, թերեքի այն կողմից
կրակում են ճանապարհորդների վրա: Մեր անցնելու նախընթաց
որը, նրանք այդ ձեռվ հարձակվել ելին զեներալ Բեկովիչի վրա,
վորը քշել անցել եր նրանց կրակոցների միջով: Ժայռի վրա
ինչ վոր ամրոցի ավերակներ են յերկում:—Նրանք շրջածեփված
են խաղաղ ոսերի հյուղերով, վորոնք կարծես ծիծենակի բույ-
ներ լինեն:

Լարսում մենք կանգ առանք գիշերելու: Այստեղ մենք
հանդիպեցինք մի ֆրանսիացի ճանապարհորդի, վորը վախեցրեց
մեղ առաջիկա ճանապարհով: Նա մեղ խորհուրդ եր տալիս թողնել
կառքերը Կորիում և ձիով գնալ: Նրա հետ մենք առաջին անգամ
խմեցինք Կախեթի գինի գարշանոտ տկնորից, հիշելով Իլիականի
խնջույքները:—

(Յեվ այծի տիկերում գինին, սիովիանքը մեր)

Այստեղ գտա յես «Կովկասյան ցերու» մի կեղտոտված ար-
տագրությունը, վորը, խոստովանում եմ, վերստին կարդացի
մեծ հաճուկքով: Այդ բոլորը թույլ ե, գեռահաս, թերատ, բայց
շատ բան կոահված ե և արտահայտված ե ճիշտ:

Հետեալ որն առավոտյան մեկնեցինք: Թուրք գերիները
կարգի ելին բերում ճանապարհը: Նրանք գանգատվում ելին
իրենց տրվող կերակուրից: Վոչ մի կերպ չելին կարողանում
ընտելանալ ոուսական սև հացին: Այդ հիշեցրեց ինձ իմ բարե-
կամ Շ-ի խոսքերը, յերբ նա վերադարձել եր Փարիզից:—«Վատ-
ե, լեղալը, Փարիզում ապրելը—ուտելու բան չկա: սև հաց չես
ճարի»:

Լարսից յոթ վերստ հեռու գտնվում ե Դարիալի պոստը:
Կիրճը նույն անունն է կրում: Ժայռերը լերկու կողմից կանգ-
նած են զուգահեռ պատերի նման: Այստեղ այնքան նեղ ե, այն-



քան նեղ, գրում ե մի ճանապահորդ, վոր վոչ միայն տես-
նում ես, այլ կարծես թե զգում ես անձկությունը:

Յերկնքի մի կտորը ժապավենի նման կապտին ե տալիս
մեր զիխավերնը. Լեռան բարձունքից մանր ու ցայտող շիթե-
րով թափվող առուները հիշեցնում եին ինձ Ռեմբրանդի տա-
րրինակ նկարը՝ Գանիմեդի հափշտակումը. Ի դեպ, կիրճն ել
լուսավորված ե միանգամայն նրա ճաշակով: Տեղ-տեղ Թերեքը
վողողում ե ժայռերի բուն ստորոտը, և ճանապահի վրա, վոր-
պես ամբարտակ, կիտված են քարեր: Պոստից վոչ հեռու գետի
վրայով խիղախորեն ձգած ե մի փոքրիկ կամուրջ: Վրան կանգ-
նում ես, կարծես ջրաղացի վրա յես: Կամուրջը ամբողջությամբ
ցնցվում ե, իսկ թերեքն աղմկում ե, ջրաղացաքարը շարժող
անիմսերի նման: Դարիալի դիմաց սեպ ժայռի վրա յերեսում են
ամրոցի ավերակներ, Ավանդությունն ասում ե, վոր այնտեղ
թագնված ե յեղել ինչ վոր Դարիա թագուհի, վորը տվել ե իր
անունը կիրճին.—հեքիաթ ե: Դարիալ հին պարսից լեզվով նը-
շանակում ե դարպաս: Պլիսիոսի վկալությամբ, Կովկասի զուռն,
վոր սխալբար Կասպից ե կոչել, այստեղ ե յեղել: Կիրճը փակ-
ված ե յեղել փայտե յերկաթապատ իսկական դարպասով:
Նրա տակից, զրում ե Պլիսիոսը, հոսում ե Դիրիոդորիս գետը: Այս-
տեղ ել կառուցված ե յեղել ամրոցը՝ վայրենի ցեղերի հարձա-
կումներին դիմադրելու համար: Տեսեք կոմս ի. Պոտոցկու ճա-
նապարհորդությունը, վորի գիտական հիտախուզումները նույն-
քան հետաքրքրական են, վորքան և իսպանական ոռմանները:

Դարիալից մենք ճանապարհեցինք դեպի Կաղբեկ: Մենք
տեսանք Տրաիցկի դարպասը (մի կամար, վոր գոյացել ե ժայռի
մեջ վասողի պայտթյունից)՝ նրա տակով մի ժամանակ անցնում
եր ճանապարհը, իսկ այժմ հոսում ե իր հունը հաճախ փոխող
թերեքը:

Կաղբեկ զյուղից վոչ հեռու մենք անցանք կատաղի նեղե-
ղատը, մի ձորակ, վորը մեծ ամձեւների ժամանակ կատաղի գետ
ե դառնում: Այդ ժամանակ նա բոլորովին ցամաքած եր և մե-
ծահոչակ եր միայն իր անունով: Կաղբեկ զյուղը գտնվում ե
Կաղբեկ լեռան ստորոտում ու պատկանում ե իշխան Կաղբեկին:
Իշխանը մոտ քառասուն հինգ տարեկան մի տղամարդ ե, հա-
սակով պրեոքաժենսկի Փլիդելմանից ավելի քարձը: Մենք նրան

գտանք դուքանում (այդպես են կոչվում վրացական ճաշակրպակ-
ները, վորոնք շատ ավելի աղքատ են և վոչ ավելի մաքուր, քան
ուսականները):

Դուռ մոտ ընկած եր մի ճամատիոր տկանը (յեզան տիկ),
իր չորս վոտները չուած: Հսկան նրանից զինի եր ծծում և մի
քանի հարց տվեց ինձ, վորոնց յես պատասխանեցի նրա կոչու-
մին ու հասակին վայել հարգանքով: Մենք բաժանվեցինք վորպես
լավ բարեկամներ:

Շուտ են թթանում տպավորությունները: Հաղիվ անցավ
մի որ և արդեն Թերեքի մոնչոցն ու նրա ալյանդակ ջրվեժները,
ժայռերն ու անդունդներն այլևս չեյին գրավում իմ ուշադրու-
թյունը: Ինձ սկսեց տիրել բացառապես Թիֆլիս համսնելու ան-
համբերությունը: Յես նույնքան անտարբեր եյի անցնում Կաղ-
բեկի մոտով, վորպես յերբեմն լողում եյի Զատըրդաղի մոտով:
Ճշմարիտ ե և այն, վոր անձրեային ու մառախլապատ յեղանակը
խանգարում եր ինձ տեսնելու նրա ձյունե շեղը, վորն, ըստ
բանաստեղծի արտահայտության, հենարան և յերկնակամարի:

Սպասում եին պարսից արքայանին: Կաղբեկից վորոշ
տաքածության վրա հանդիպեցին մեզ մի քանի կառքեր և գըժ-
վարացրին նեղ ճանապարհը: Մինչեւ կառքերը իրար մոտով
կանցնեյին, պահակախմբի սպան հայտնեց մեզ, վոր նա ուղեկ-
ցում ե պարսից պալատական բանաստեղծին, և իմ ցանկությամբ
ներկայացրեց ինձ Ֆաղիլ-Խանին: Յես թարգմանի ոգնությամբ,
դիմեցի նրան արեւելյան վերամբարձ վողջունի խոսքով, բայց
վորքան ամաչեցի, յերբ Ֆաղիլ-Խանը իմ անտեղի խեղկատա-
կությանը պատասխանեց կարգին մարդուն հատուկ պարզ, խե-
լացի քաղաքավարությամբ: «Նա հույս ուներ ինձ տեսնելու
Պետերբուրգում: Նա ցավում եր, վոր մեր ծանոթությունը լի-
նելու յե վոչ յերկարատե և այլն»: Ամոթով յես ստիպված եյի
թողնել իմ փքված—կատակային տոնը և անցնել սովորական
յեվրոպական ֆրազների: Ահա մի դաս մեր ուսական ծաղրասիրու-
թյան համար: Այսուենտե յես չեմ դատի մարդու մասին նրա
վոչխարի փափախով¹⁾ և ներկած յեղունգներով:

Կորի պոստը գտնվում ե Կրեստովկայա լեռան հենց ստո-
րոտում, վորի վրայով մենք պիտի անցնեյինք: Մենք ալստեղ
կանգ առանք գիշերելու համար և սկսեցինք մտածեր, թե ինչ-

1) Այդպես են կոչվում պարսկական դդակները:

պես կատարենք այդ սոսկալի սիրագործությունը. — արդյո՞ք թողնելով կառքերը, կողակների ձիերը նստենք, թե ուզարկենք ուերի յեղների յետերց. Համենայն զեաս յև մեր ամբողջ քարավանի կողմից պաշտոնական խնդիրք գրեցի Գ. Զ***-ին <Զիւյացիվին>, վորն այս կողմերի պետն ե, և մենք պառկեցինք քնելու սպասելով սալերին:

Մյուս որը ժամը մոտ 12-ին մենք լսեցինք աղմուկ, աղաղակներ, և տեսանք մի արտասովոր տեսարան. — 18 դույդ լդար. փոքրահասակ յեղներ, մի խումբ կիսամերկ ուերի հարվածների տակ, հաղիվ հազ քաշում եյին իմ բարեկամ Ո-ի թեթև վիենական կառքը. Այդ տեսարանն իսկույն ցրեց իմ բուռոր տարակուսանքները, Յես վճռեցի իմ ծանր պետերբուրգյան կառքը յետ ուղարկել Վլադիկավկազ և ձիով գնալ Թիֆլիս. Կոմմ.Պ <ուշկինը> չեր ուղում հետեւ իմ որինակին: Նա գերազանց յեղների մի ամբողջ նախիր լծել իր բրիչկային (կիսակառքը), վոր ըեռնված եր ամեն տեսակի պաշարներով և հանդիսանոր կերպով անցնել ձյունապատ լեռնաշղթան: Մենք բաժանվեցինք և յես գնացի զնդապետ Ոգ <արյովի> հետ, վորը հետախուզում եր այստեղի ճանապարհները:

Ճանապարհը գնում եր փլվածքի վրայով, վոր տեղի յեր ունեցել 1827 թվի հունիսի վերջին: Այդպիսի գեպեր պատահում են սովորաբար յուրաքանչյուր յոթ տարին մեկ: Քարի մի ահազին գուղձ վայր գլորվելով, լցրել եր կիրճը մի ամբողջ վերստ տարածությամբ և կտրել եր թերեքը: Ներքեւ կանգնած պահակները լսել եյին սոսկալի դղրդյուն և տեսել եյին, վոր գետնարագորեն բարակել ե և մի քառորդ ժամում բոլորովին հանդարտվել ու սպառվել: Թերեքը գուրս եր յեկել փլվածքի միջով վոչ առաջ, քան յերկու ժամից հետո: Այդ պատճառով ել նա այդքան ահռելի յե յեղել:

Մենք դիք բարձրանում եյինք ավելի ու ավելի վեր: Մեր ձիերը խրցում եին փխրուն ձյունի մեջ, վորի տակ աղմկում եյին փտակները: Յես զարմանքով եիի նայում ճանապարհին և չեյի ըմբռնում անիվներով գնալու հնարավորությունը:

Այդ ժամանակ յես լսեցի խուլ վորոտ: «Դա փլվածք ե», — ասաց ինձ պ. Ոգ <արյովը>: Յես յետ նայեցի և տեսա այն կողմում մի ձյունակույցտ, վորը պոկելով դանդաղորեն իջնում եր զառիվայրից: Փոքր փլվածքները այստեղ հազվադեպ չեն: Անցյալ տարի մի ուուս սայլապան անցնելիս ե յեղել կրեստովայա-

լեռնով: Փլվածքը պոկել եր սոսկալի ձնագունդը ընկել ե նրա սայլի վրա, կլանել ե սայլը, ձին ու գեղջուկին, գլորվել ե ճանապարհի մյուս կողմը և իր ավարի հետ միասին թավալվել ե գեպի անդունդը: Մենք հասանք սարի գագաթին: Այստեղ դրվուծ ե գրանիտե խաչ, մի հին հուշարձան, վոր վերանորոգել ե Յերմոլովը:

Այստեղ ճանապարհորդները սովորաբար իջնում են կառքերից և գնում են վոտով: Նորերս այստեղից անցել ե մի ինչ վոր ստարերկրացի հյուպատոս. — նա այնքան թույլ ե յեղել, վոր պատվիրել ե իր աչքերը կապել, նրան տարել են թեփ բռնած, և յերբ հանել են նրա աչքի կապոցը, այն ժամանակ նա ծունկ ե չոքել, զոհություն ե հայտնել աստծուն և այլն, վոր շատ գարմացրել ե ուղեկցողներին:

Վայրկենական անցումը ահավոր կովկասից դեպի գեղատեսիլ Վրաստանը հիանալի յեր: Հարավի ողը հանկարծ սկսում ե մեղմորեն փեկ ճանապարհորդի վրա: Դուտ սարի բարձունքից բացվում ե Կայշառութի հովիտը իր մարդաբնակ ժայռերով, իր այգիներով, իր հստակ Արագվայով, վոր վոլորվում ե, վորպես արձաթե ժապավեն, — և այս բոլորը փոքրացրած ձեռվ, յերեք վերստանոց անդունդի հատակում, վորի յեղրով անցնում ե վտանգավոր ճանապարհը:

Մենք իջնում եյինք դեպի հովիտը: Նորալուսինը յերեաց պարզ յերկնքում: Յերեկոյան ողը մեղմ եր և տաք: Յես գիշերեցի Արագվայի ափին, Գ. Զ <իլլայեվի> տանը: Մյուս որը յես հրաժեշտ տվի սիրալիր տանտիրով ու շարունակեցի ճանապարհը:

Այստեղ սկսվում ե Վրաստանը: Զվարթ Արագվայով վոռոգով պահանձառ հովիտները փոխարինեցին մուալ կիրճերին և ահեղ թերեքին: Մերկ քարափների փոխարեն յես տեսա իմ շուրջը կանաչ լեռներ և պտղատու ծառեր: Զրանցքները ապացուցում եյին կրթվածության առկայությունը: Նրանցից մեկն ինձ զարմացրեց տեսողության պատրանքի կատարելությամբ, — ջուրը, կարծես հոսում ե սարի վրայով վարից դեպի վեր:

Փասանառություն յես կանգնեցի ձիերը փոխելու համար: Այստեղ յես հանդիպեցի մի ուուս սպայի, վորն ուղեկցում եր պարագայադին: Շուտով յես լսեցի զանգակների ձայն, և մեկը մյուսին կապած և ասիական ձեռվ ըեռնված, զաթարների (Ձորիների) մի ամբողջ շարան ձգվեց ճանապարհի վրա: Յես

գնացի վոտով, չսպասելով ձիերին։ Անանուրից կես վերստ հեռու, ճանապարհի պտույտում հանդիպեցի Խոզրով-Միրզային։ Նրա կառքերը կանգնած եյին։ Ինքը գուրս նայեց իր կառքից և գլխով արավ ինձ։ Մեր հանդիպումից մի քանի ժամ հետո, արքայանի վրա հարձակվել ելին լեռնց/ները։ Լսելով գնդակների սուլոցը, Խոզրովը դուրս եր ցատկել իր կառքից, նստել եր ձին ու փախել։ Նրա հետ յեղած ոռւսները դարմացել են նրա համարձակության վրա։ Բանն այն ե, վոր կառքին անսովոր յերիտասարդ ասիացին համարել ե կառքը ավելի շուտ ծուղակ, քան թի ապաստարան։

Յես հասա Անանութ, առսնց հոգնածություն զգալու։ Իմ ձիերը չեյին յեկել։ Ինձ ասացին, վոր մինչեւ Դուշեթ քաղաքը մնացել ե վոչ ավել, քան տասը վերստ, և յես դարձյալ գնացի վոտով։ Բայց յես չգիտեյի, վոր ճանապարհը սարն ի վեր ե գնում։ Այդ տասը վերստը արժեյին ամբողջ քսան վերստ։

Վրա հասավ յերեկոն։ յես առաջ եյի գնում, բարձրանալով ավելի ու ավելի վեր ճանապարհից մոլորվել անկարելի յեր։ բայց տեղ-տեղ աղբյուրներից գոյացած կավոտ ցեխը հասնում եր մինչեւ ծնկներս։ Յես բոլորովին հոգնեցի։ Մութն ավելացավ։ Յես լսում եյի շների վոռնոց ու հաջոց, և ուրախանում եյի։ յերեակայելով, վոր քաղաքը հեռու չե։ Բայց սխալվում եյի։ — հաջում եյին վրացի հովիվների շները, իսկ վոռնում եյին չախկալները, վոր այնտեղ սովորական են։ Յես անիծում եյի իմ անհամբերությունը, բայց ել ճար չկար, վերջապես տեսա յես լույսեր և կես գիշերին առ արդեն կանգնած ելի ծառերի ստվերով պատած տների մոտ։ աշխին պատահած մարդը հանձն առավ ուղեկցելու ինձ քաղաքապետի մոտ և դրա համար ինձնից պահանջեց մեկ աբասի։

Իմ յերեալը քաղաքապետի մոտ, վորը մի վրացի հին սպայեր, մեծ աղբեցություն գործեց։ Յես պահանջում եյի առաջինը — սենյակ, վորտեղ կարողանայի հունվել, յերկրորդը՝ մի բաժակ գինի, յերրորդը՝ մի աբասի իմ ուղեկցողի համար։ Քաղաքապետը չգիտեր, ինչպես ինձ ընդունի, և նայում եր ինձ վրա տարակուսանքով։ Տեսնելով, վոր նա չի շտապում կատարելու իմ խնդիրքները, յես սկսեցի նրա մոտ հանվել, ներողությունը լուսակացնելով de la liberté' grande¹⁾։

¹⁾ <այդպիսի մեծ աղասության համար>։

Բարեբախտաբար, յես գտա գրպանումս իմ ճանապարհորդական վկայականը, վորն ապացուցում եր, վոր յիս խաղաղ ճանապարհորդ եմ, և վոչ թե Ռինալդո Ռինալդինի։ Ռինյալ հրովարտակն ունեցավ անմիջապես իր աղդեցությունը։ Ինձ սենյակ հատկացվեց, սի բաժակ գինի բերվեց, և աբասին տրվեց իմ ուղեկցողին, հայրական հանդիմանությամբ, հանդերձ նրան վրացաւան հյուրասիրությունը վիրապորդ շահասիրության համար։ Յես նետվեցի բազմոցի վրա, հուսալով իմ սխրագործությունից հետո քնել դժուցազնական քնով։ բայց չեղավ այդ լուերը, վորոնք չախկալներից շատ ավելի վտանգավոր են, հարձակվեցին վրաս և ամբողջ գիշերն ինձ հանգիստ չտվին։ Առավոտյան յեկավ մոտս իմ ծառան և հայունեց, վոր կոմս Ψ <ուշկինը> բարեհաջող կերպով լողներով անցել ե ձյունապատ սարերը և ժամանել ե Դուշեթ։ Պետք եր շտապել։ Կոմս Ψ <ուշկինը> և $\tilde{\Psi}$ <երնվալը> ալցելցին ինձ և առաջարկեցին դարձյալ միասին ճանապարհ ընկնել։ Յես թողի Դուշեթն այն հաճելի մտքով, վոր գիշերեկու լու լու թիվիլսում։

Ճանապարհը նույնչափ հաճելի լու և գեղատեսիլ, թեև հազվագեպ եյինք մենք տեսում աղքաբնակության հետքեր։ Գարցիսկայայից մի քանի վերստ այն կողմը մենք անցանք փուռը, հոռվմեական արշավանքների ժամանակներից մնացած հնագարյան կամուրջով և խոշոր վարդով, իսկ յերբեմն ել չափ գցելով ձիերը քշեցինք դեպի Թիֆլիս, ուր և հասանք աննկատելի կերպով պայմանական ժամի մոտ 11-ին։

Թիֆլիս: Ժողովրդական բաղանիք: Անքիթ Հասանը: Վրացական բարքերը Յերգեր Կախեթի գինեն: Շոգերի պատճառը: Թանգություն: Քաղաքի նկարագրությունը: Թիֆլիսից մեկնելը: Վրացական գիշերը: Հայաստանի տեսքը: Կրկնակի չկերթ: Հայկական գյուղ՝ Գյաւալյառ: Գրիբոյեզովը: Բզովդալ Հանքայն աղբյուր: Մըրիկ լեռներում: Գիշերում Գումրիում: Արարատ: Սահման: Թուրքական հյուրասիրություն: Կարս: Հայ ընտանիք: Կարսից մեկնելը: Կոմս Պասկեիչի ճամբարը:

Յես իջա պանդոկում, մյուս որը գնացի Թիֆլիսի հըռաշակավոր բաղանիքը: Քաղաքն ինձ մարդաշատ թվաց: Ասիսկան շինություններն ու բազարը հիշեցնում եյին ինձ Քիշինեւը: Նեղ ու ծուռ փողոցներով վազում եյին քթոցներով բեռնված եշեր, յեզներով լծված սայլերը բռնել եյին ճանապարհը: Հայեր, վրացիներ, չերքեղներ, պարսիկներ խոնլել եյին անկանոն հրապարակի վրա: Նրանց միջև շրջագայում եյին յերիտասարդ ոուս աստիճանավորներ Ղարաբաղի հովատակներ հեծած: Բաղանիքի մուտքի մոտ նստած եր բաղնիք պահողը՝ մի ծեր պարսիկ: Նա բաց արեց իմ առաջ դուռը, յես ներս մտա մի լայնարձակ սենյակ և ի՞նչ տեսսա: Հիսունից ավելի կին, ջահել և պառավ, կիսահագնված կամ բոլորովին չհագնված, նստած ու կանգնած հանվում եյին, հագնվում եյին պատերի մոտ դրված նստարանների վրա: Յես կանդ առա: Գնանք, գնանք, ասաց ինձ տերը, այսոր յերեքշաբթի յե. — կանանց որն ե: Վոչինչ, հոգ չե: Ի հարկե հոդ չե, պատասխանեցի յես նրան, ընդհակառակը: Տղամարդկանց յերևալը վոչ մի տպավորություն չգործեց: Նըրանք շարունակում եյին ծիծաղել և իրար հետ խոսել: Վոչ

մեկը չշտապեց ծածկվել իր չտրայով, վոչ մեկը չդադարեց հանվելուց: Կարծես թե յես անընկույթ եյի. շատերը նրանցից իսկապես չքնաղ եյին և արդարացնում եյին թ. Մուրի յերևակայությունը՝

a lovely Georgian maid,
With all the bloom, the freshened glow
of her own country maiden's looks.
When warm they rise from Teflis brooks.

Lalla Rookh¹⁾

բայց և յես չգիտեմ ավելի գարշելի բան, քան վրացի պառակները. — դրանք վհուկներ են:

Պարսիկը ներս տարավ ինձ բաղանիքը. — տաք յերկաթածմբային աղրյուրը թափվում եր ժամի մեջ փորված խոր ավազանի մեջ, կյանքում, վոչ նուսաստանում, վոչ ել թուրքիայում չեմ հանդիպել յես մի այլ ավելի շքեղ բանի, քան թիֆլիսի բաղանիքները: Նկարազրեմ դրանց ավելի մանրամասնորեն:

Տերը թողեց ինձ թյուրք բաղնիսպանի խնամքին: Յես պետք եւ խոստովանեմ, վոր նա անքիթ եր. — դա չեր խանգարում նրան իր գործին վարպետ լինելու: Հասանը (այդպես եր կոչվում անքիթ թյուրքը) սկսեց նրանից, վոր պառկեցրեց ինձ տաք քարե հատակի վրա, և ապա սկսեց տրորել մարմինս, ձգել հողերս, ամուր խփել ինձ բռունցքներով: Յես չեյի զգում նվազագույն ցավ անգամ, այլ զարմանալի թեթեռություն: (Աժիական բաղնիսպանները (քիսաշիները) յերբեմն վողերովում են, ցատկում են ձեր ուսերին, սահում են վոտներով ձեր աղդրերի վրայով և մեջքիդ վրա պաղած պարում են, և sempre bene)²⁾: Մրանից հետո նա ինձ յերկար տրորում եր բրդիա թաթմանով (քիսալով) և ուժգնությամբ տաք ջուրը վրաս տալով, սկսեց լըշվանալ սապոնած քաթանի փամփուշտով: Մի անբացարելի զգացում ե. — ձեր վրա տաք սապոնը թափվում ե, վորպես ոդէ N. B. — բրդի թաթմանն ու քաթանի փամփուշտն անպատճառ պետք ե ընդունվեն ոուսական բաղանիքում. — զիտակները շնորհակալ կլինեն այդպիսի նորմուծության համար:

1) <Մի չքնաղ վրացուհի կույս, այտերի այնպիսի գույներով ու զովապով, վորպիսին լինում ե նրա յերերի կույսերի մոտ, յերբ նրանք չիկացած դուրս են գալիս Թիֆլիսի ջերմուկներից: Լալլա-Ռուկ>

2) <և մշշտ լավ>

Փամփուշտից հետո զասանը թույլատրեց ինձ ավագանը՝
մտնել, դորանով ել վերջացավ արարողությունը:

Թիֆլիսում յես հույս ունեցի գտնել Ռ <անկովուն>, բայց
իմանալով, վոր նրա գունդն արդեն լեռ ե արշավանքի, յես
վճռեցի կոմս Պասկեիչից թույլավություն խնդրել՝ բանակը
գնալու:

Թիֆլիսում մնացի յես մոտ յերկու շաբաթ և ծանոթացա այն-
տեղի հասարակության հետ: Ս <անկովուի ին> Թիֆլիսի Տեղե-
կապրի հրատարակից, ինձ շատ հետաքրքրական բանիր պատ-
մեց այս յերկրի մասին, ի <շխան> Յիշիանովի մասին, Ա. Պ.
Յերմոլովի մասին և այլն. Ս <անկովուի ին> սիրում ե Վրաստանը
և նրա համար փայլուն ապագա յե նախատեսում:

Վրաստանը ապավինեց Ռուսաստանի հովանավորությանը 1783 թ., բայց այդ շխանգարեց հոչակավոր Ալա-Մոհամեդին
վերցնել ու ավերել Թիֆլիսը և 20000 գերի տանել (1795): Վր-
աստանը անցավ Ալեքսանդր Կայսրի գայլունի տակ 1802-ին
Վրացիները ռազմասիր ժողովուրդ են: Նրանք ապացուցեցին
իրենց քաջությունը մեր դրոշակների տակ: Նրանց մասվոր ըն-
դունակությունները սպասում են մեծ կրթածության: Նրանք
առհասարակ ուրախ և սրտարաց ընավորություն ունեն: Տոնե-
րին տղամարդիկ խմում են և զրունում փողոցներում: Աևաչա-
տղաները յերգում են, թոշկում են, թիշկում, գլխկոնձի յեն տալիս: Կա-
նալը լեզգինկա յեն պարում:

Վրացական յերգերի յեղանակը դուրեկան եւ ինձ թարգ-
մանեցին նրանցից սեկը բառ առ բառ նա կարծեմ, հորինված
ե նորագույն ժամանակներս: Նրա մեջ ինչ վոր արևելյան անհե-
թեթություն կա, վորն ունի իր բանաստեղծական արժանիքը:
Անա նա:—

Հոգի, վոր նոր ես ծնվել զբախում, հոգի, վոր ստեղծված ես իմ յեր-
ջանկության համար: Քեզանից եմ, ով անմահ, սպասում յես կյանք:
Քեզանից, ով գարուն ծաղկաթթվ, քեզանից, ով լուսնյակ յերկշաբա-
թյա, քեզանից, իմ պահապան հրեշտակ քեզանից եմ սպասում յես
կյանք:

Դու փայլում ես դեմքով և ուրախացնում ես ժպիտով: Չեմ ուզում աշ-
խարհին տիրապետել ուզում եմ քո հայացքը:

Քեզանից եմ սպասում յես կյանք:
Սարի վարդ ցողով թարմացած, բնության ընտրյալ սիրելի,
Մեղմ, թագնված գանձ, քեզանից եմ սպասում յես կյանք:

Վրացիք մեզ նման չեն խմում և դարձանալիորեն դիմաց-
կուն են: Նրանց գինիները չեն դիմանում արտահանման և
շուտ փչանում են, իսկ տեղում նրանք հիանալի յեն: Կախե-
թի և Ղարաբաղի գինիները արժեն մի քանի բուրգոնյան գի-
նիների: Գինին պահում են մառաններում, հողում թաղված ահա-
գին կարասներում: Դրանք բացում են հանդիսավոր ծեսերով:
Նորերս մի ոռւս դրագուն, գաղտնի բաց անելով մի այդտե-
սակ կարաս, ընկնում ե մեջն ու խեղգվում ե կախեթի գինու
մեջ, ինչպես դժբախտ կարենսը մալագայի տակառում:

Թիֆլիսը գանվում ե Քուրի ափերին, քարքարոս լեռներով
շքջապատված հովտում: Սրանք պաշտպանում են նրան բոլոր
կողմերից քամիներից և, շիկանալով արեից, վոչ թե տաքացնում,
այլ լեռացնում են անշարժ ողբ: Անա Թիֆլիսում տիրող անտա-
նելի շոգերի պատճառը, չնայած, վոր քաղաքը միայն լայնության
41 աստիճանի վրա յե: Հենց նրա անունը (Տիֆլիս-քաղաք)
նշանակում ե տաք քաղաք:

Քաղաքի մեծ մասը շինված ե ասիական ձևով. — տները
ցածր են, կտորները տափակ: Հյուսիսային մասում բարձրա-
նում են յելվոպական ճարտարապետության տներ, և նրանց
մոտ սկսում են գոյանալ կանոնավոր հրապարակներ: Շուկան
բաժանվում ե մի քանի շարքերի: Խանութները լի յեն թուր-
քական և պարսկական ապրանքներով, բավականին եժան են,
յեթե նկատի առնենք ընդհանուր թանգությունը: Թիֆլիսի
գենքը թանգ ե գնահատվում վողջ Արևելքում: Կոմս Ս <ամոյ-
լով> և Վ., վորոնք այստեղ զուցացների հոչակ են ստացել,
սովորաբար փորձել են իրենց նոր թիրերը մի հարվածով բաժա-
նելով վոչխարը յերկու մասի կամ կտրելով յեզան գլուխը:

Թիֆլիսում ազգաբնակության մեծ մասը կազմում են հա-
յերը — 1825 թվին նրանք այստեղ մինչեւ 2500 ընտանիք են յե-
ղել: Այժմյան պատերազմների ժամանակ նրանց թիվը ավելի
մեծացել ե: Վրացի ընտանիքներ հաշվում են մոտ 1500: Ռուսներն
իրենց այստեղի բնակիչ չեն համարում: Զինվորականներն ապ-
րում են Վրաստանում, կատարելով իրանց պարտքը, վորովհետեւ
նրանց ազգպես ե հրամայված: Յերիտասարդ տիտուլյար խորհը-
դականները գալիս են այստեղ ասեսորի աստիճանի համար,
վոր այնքան փափագելի յե: Թե մեկը և թե մյուսները Վրաս-
տանի վրա նայում են, վորպես աքսորավայրի վրա:

Թիֆլիսի կլիման, ասում են, անառողջ եւ Այստեղի տեհնդերը սարսափելի յեն. այն բուժում են սնդիկով, վորի գործածությունն անվաս ե շոգերի պատճառով: Բժիշկները նրանով կերակրում են իրենց հիվանդներին առանց վորեն խղճի: Գեներալ Յ <իպյագինը>, ասում են, մեռել ե նըանից, վոր նրա տնային բժիշկը, վորը յեկել եր նրա հետ Պետքրուրզից, վախեցել եր տեղական բժիշկների առաջարկած գլուխակից և չեր տվել այն հիվանդին: Այստեղի ջերմերը նման են Կրիմի և Մոլդավիայի ջերմերին և միատեսակ են բուժվում:

Բնակիչները խմում են Քուռի պղտոր, բայց գուրեկան ջուրը: Բոլոր աղբյուրների և ջրհորների ջուրը ուժգին ծծումքի համ ունի: Թեե այստեղ գինին այնչափ ընդհանուր գործածության մեջ ե, վոր ջրի պակասը նկատելի չեր լինի:

Թիֆլիսում ինձ զարմացրեց փողի եժանությունը: Ցերկու փողոց միայն անցնելով կառքով և բաց թողնելով նրան կես ժամից հետո, յես պետք ե վճարելի էրկու ոռութի արծաթով: Յես առաջ կարծում եյի, թե նա ուղում եր ոգտվել նորեկի անգիտությունից, բայց ինձ ասացին, վոր գինը ճիշտ այդքան ե: Մյուս բոլոր բաները թանգ են նույն համեմատությամբ:

Մնաք գնացինք գերմանական գաղութը և այնտեղ ճաշեցինք: Խմեցինք այնտեղ պատրաստվող գարեջուր, վոր շատ անդուրեկան համ ունի և ճարպեցինք շատ թանգ շատ վատ ճաշի համար: Իմ պանդոկում ինձ նույնպես կերակրում եյին թանգ և վատ: Գեներալ Ս <տրեկալով> ը, վոր հայտնի գաստրոնոմ ե, մի անգամ ինձ հրավիրեց ճաշի: Դժբախտաբար նրա մոտ կերակուրները մատուցում եյին ըստ աստիճանների, իսկ սեղանի շուրջը նստել եյին անզլիւկան սպաներ, գեներալների ուսադիրներով: Սպասավորները մատուցելիս այնպիսի ջանասիրությամբ ինձ բաց եյին թողնում, վոր յես սեղանից վեր կացա քաղցած: Սատանան տանի թիֆլիսի գաստրոնոմին:

Յես անհամբերությամբ սպասում եյի, վոր վիճակս վորոշվի: Վերջապես Ռ <այեսկակուց> նամակ ստացա: Նա ինձ գրում եր, վոր յես շտապեմ դեպի կարս, վորովհետեւ մի քանի որից դորքը պիտի առաջ շարժվեր: Յես հենց հետեւալ որը ճանապարհնկա:

Յես դնում եյի ձիով, փոխելով ձիերը կողակների պոստերում: Շուրջս գետինը խանձված եր տոթից: Վրացական գյու

ղերը հեռվից ինձ գեղեցիկ այգիներ եյին թվում, իսկ մոտենալով նրանց, յես տեսնում եյի մի քանի աղքատ խրճիթներ ծածկված փոշու բարդիների հովանու տակ: Արել մայր մտավ, բայց ողը դեռ խեղդող եր.—

Գիշերներ տոք,
Ասդեր ոտար...

Լուսինը փայլում եր. ամեն ինչ խաղաղ եր: Միամիայն ձիուս դոփյունն եր լավում զիշերային լուսթյան մեջ: Յես յերկար գնում եյի, չանդիպելով բնակության նշույլների: Վերջապես տեսա առանձնացած մի խրճիթ: Սկսեցի բաղիսել դուռը: Դուրս լեկավ տերը: Յես ջուր խնդրեցի, նախ ոռւսերեն, ապա թուրքերեն: Նա ինձ չհասկացավ: Զարմանալի անհոգություն: Թիֆլիսից յերեսուն վերստի վրա, Պարսկաստանի և Թուրքիայի ճառապահնեն, նա վոչ մի խոսք չգիտեր վոչ ոռւսերեն, վոչ ել թուրքերեն:

Գիշերն անցկացնելով կողակների պոստում, յես լուսաբացին շարունակեցի ճանապարհու ձանապարհու անցնում եր սարերով և անտառով: Յես հանդիպեցի ճանապարհորդ թյուրքերի: Նրանց մեջ կային մի քանի կանալք: Նրանք նստած եին ձիերի վրա, փաթաթված չաղրակով, միայն յերեսում եյին նրանց աչքերն ու կրունկները:

Յես սկսեցի բարձրանալ Բզովդալը, այն սարը, վորը բաժանում ե Վրաստանը հին Հայաստանից: Ծառերով հովանավորված լայն ճանապարհը վոլորապտույտ անցնում ե սարի մոտով: Բզովդալի գագաթին յես անցա մի փոքր կիրճով, վորը, կարծեմ, Գայլի գուռ ե կոչվում և արդեն գտնվում եյի Վրաստանի բնական սահմանի մոտ: Իմ առաջ բացվեցին նոր սարեր, նոր հորիզոն, վոտներիս տակ փոված եյին բուսավետ, կանաչ արտեր: Յես մի անգամ ել նայեցի արեկց խանձված Վրաստանի վրա և սկսեցի վայր իջնել սարի թեթև զարիվայր լանջով գեպի Հայաստանի թարմ գաշտավայրերը: Անկարագըելի հաճույքով յես նկատեցի, վոր տոթը հանկարծ մեղմացավ: Կլիման արդեն ուրիշ եր:

Ծառաս բեռնակիր ձիերի հետ ինձնից յետ մնաց: Յես գընում եյի մենակ ծաղկափթիթ անապատով վոր հեռվից շրջապատված եր սարերով: Ցրվածությանս պատճառով յես այն պոստի մոտով անցա, ուր պետք ե ձիերը փոխեյի: Անցավ

ավելի քան վեց ժամ և յես սկսեցի զարմանալ, թէ ինչու յերկարեց ճանապարհը: Յես տեսա մի կողմում քարակուտեր, վորոնք նման եյին հյուզերի և գնացի նրանց մոտ: Պարզվեց, վորի խկապես յես յեկել եյի մի հայկական գյուղ:

Մի քանի կին, խայտարդեա ցնցոտիներ հազներին նստած եյին գետնափոր խրճիթի տափակ կտրին: Յես մի կերպ բացատրվեցի: Նրանցից մեկն իջավ խրճիթը և բերեց ինձ համար պանիր ու կաթ: Մի քանի բոպե հանգստանալով, յես առաջ գնացի և դիմացս, գետի բարձր ափին տեսա Դյառգյառ բերդը: Յերեք վտակ աղմուկով ու փրփրած վայր եյին թափվում բարձր ափից: Յես անցա գետը, Յերկու յեղ, սալին լծած բարձրանում եյին զամաթափ ճանապարհով: Մի քանի վրացի ուղեկցում եյին սայլը: Վորտեղից եք գալիս դուք, հարցրի յես նըրանց.—Թէհրանից:—Ի՞նչ եք տանում:—Գրիբոյեդին: Դա սպանված Գրիբոյեդովի մարմինս եր, վոր փոխադրում եյին Թիֆլիս:

Յես չեյի կարծում, թե յերբեցե կհանդիպեմ մեր Գրիբոյեդովին: Յես բաժանվեցի նրանից անցյալ տարի, Պետերբուրգում, նրա Պարսկաստան գնալուց առաջ: Նա տխուր եր և տարրինակ նախազգացումներ ուներ: Յես սկսեցի նրան հանգստացնել. նա ինձ ասաց:—Vous ne connaissez pas ces gens là vous verrez, qu'il faudra jouer des couteaux¹⁾: Նա կարծում եր, թե արյունահեղության պատճառը կլինի շահի մահը և նրա յոթանասուն վորդիների միջև ծագած յերկպառակությունը: Սակայն զառամած շահը դեռ կենդանի յե, իսկ Գրիբոյեդովի մարզարեական խոսքերը իրականացան: Նա ընկալ պարսիկների դաշույներից, վորպես տղիտության և նենգության դոհ: Նրա այլանդակված զիակը, վոր յերեք որ թէհրանի ամբոխի խաղալիքն և յեղեւ կարելի յեր յեղեւ ճանաչել միայն ձեռքից, վորը մի ժամանակ ծակված եր յեղեւ ատրճանակի գնդակով:

Յես Գրիբոյեդովի հետ ծանոթացա 1817 թվին: Նրա մելանխոլիկ բնավորությունը, նրա զայրացած խելքը, նրա բարեհոգությունը, բոլոր նրա թուլություններն ու արատները, վորոնք մարդկության անխուսափելի ուղեկիցներն են, — ամեն ինչ նրա մեջ արտասովոր զրավչություն ուներ: Ի ծնե ունենալով փառամիրություն, վոր համապատասխանում եր իր ձիբքերին,

1) <Պուք դես չգիտեք այդ մարդկանց:—դուք կտեսնեք, վոր բանը կհասնի դանակների>

Նա յերկար ժամանակ մնացել եր մանր կարիքների և անհայտության ցանցերով պատաժ: Պետական մարդու ընդունակությունները մնացել եյին առանց գործադրության: Բանաստեղծական տաղանդը ճանաչված չեր. մինչեւ իսկ նրա սառն ու փայլուն քաջությունը վորոշ ժամանակ մնացել եր կասկածանքի տակ: Մի քանի բարեկամներ միայն գիտեյին նրա գինը և տեսել եյին անվատահության այն ժպիտը, այն հիմար, անտահելի ժպիտը,— յերբ նրանք առիթ եյին ունեցել խոռոչու նրա մասին, վորպես մի արտակարգ մարդու մասին: Մարդիկ հավատում են միայն Փառքին և չեն հասկանում, վոր իրանց մեջ կարող և գտնվել մի վորմեն նապոլիոն, վոր չի առաջնորդել և վոչ մի յեղերական վաշտ, կամ մի այլ Դեկարտ, վոր չի տպագրել վոչ մի տող Մոսկովսկի Տելեգրաֆում: Սակայն գեղի փառքը տածած մեր հարգանքը ծագում և գուցե ինքնասիրությունից:—Փառքի կազմի մեջ չե վոր մտնում ե և մեր ձայնը:

Գրիբոյեդովի կյանքը մթազնած եր վորոշ ամպերով:— հետևանք՝ բորբոք կրքերի և հղոր հանգամանքների: Նա անհրաժեշտություն զգաց մի անգամ ընդմիշտ հաշիվ տեսնել իր յերիտասարդության հետ և կտրուկ շուռ տալ իր կյանքը: Նա հրաժեշտ տվեց Պետերբուրգին և անհոգ ցրվածությանը, զնաց վրաստան, ուր մնաց ութ տարի, նվիրված իր մեկուսացած անխոնջ պարապմունքներին: Նրա Մոսկվա վերագանալը 1824 թվին հեղաշրջում եր նրա վիճակի մեջ և սկիզբ անընդհատ հաջողությունների: Նրա ռևելքից պատուհաս» ձեռագիր կոմեղիան անկարագրելի ազգեցություն գործեց և մի անգամից նրան դասեց մեր առաջնակարգ բանաստեղծների շարքը: Մի վորոշ ժամանակ անց, նրա կատարելապես ծանոթ լինելն այն յերկրին, վորտեղ սկսվում եր պատերազմը, նոր ասպարեզ բացեց նըրա առաջ: Նա նշանակված եր դեսպան: Գալով Վրաստան, նա ամուսնացալ նրա հետ, վորին սիրում եր... յես չգիտեմ ավելի նախանձելի մի բան, քան նրա փոթորկալից կյանքի վերջին տարիները: Նույնիսկ խիղախ անհավասար կովում վրա հասած մահը, Գրիբոյեդովի համար չեր յեղեւ սարսափելի ու տանջալի մի բան: Այն վայրկենական ե յեղեւ և սքանչելի:

Վորքան ցավալի յե, վոր Գրիբոյեդովը չի թողել իր հուշագրերը: Նրա կենսագրությունը գրելը նրա բարեկամների գործը պետք ե լինի: Սակայն նշանավոր մարդիկ մեզ մոտ անհետանում են, հետք չթողնելով իրենցից հետո: Մենք ծույլ ենք և չհետաքրքրվող:

Գյառդյառում լես հանդիպեցի Բ <ուտուրլինին>, վորը, ինչպես և յես, զնում եր բանակը. Բ <ուտուրլինը> ճանապարհորդում եր բազմապիսի հարմարություններով: Յես ճաշեցի նրա մոտ կարծես Պետերբուրգում: Մենք վճռեցինք ճանապարհորդել միասին, սակայն անհամբերության դեվը նորից տիրեց ինձ: Ծառաս ինձնից թույլտվություն խնդրեց հանգստանալու: Յես ուղեվորվեցի մենակ, նույնիսկ առանց ուղեկցողի: Ճանապարհը միշտ նույնն եր և միանգամայն անվտանգ: Անցնելով վոչ բարձր մի սար և իջնելով ծառերով ծածկված հովիտը, յես տեսա մի հանքային աղբյուր, վոր հոսում եր ճանապարհի լայնքով: Այստեղ յես հանդիպեցի մի հայ տերտերի, վորը զընում եր Յերկանից Ախալցխա: Ի՞նչ նոր բան կա Յերկանում,— հարցը ի յս նրանից:— Յերկանում ժանտախտ ե, —պատասխանեց նա:— իսկ ի՞նչ լուր կա Ախալցխայի մասին:— Ախալցխայում ժանտախտ ե, —պատասխանեցի յես նրան: Փոխանակելով սույն հաճելի լուրերը, մենք բաժանվեցինք:

Յես գնում եյի բերի արտերի և ծաղկափթիթ մարգագետինների միջով: Հունձը ծորում եր, սպասելով մանգալի: Յես հիանում եյի այս սքանչելի հողով, վորի բերրիությունը արեվելքում առած ե դարձել: Իրիկնաղեմին յես հասա Պարնիքյոյ: Այստեղ կողակների պոստ կար: Ուրյագնիկը փոթորիկ եր նախագուշակում և ինձ խորհուրդ եր տալիս մնալ գիշերելու: Բայց յես ուղում եյի անպատճառ նույն որը հասնել Գումրի:

Յես պետք ե անցնեյի վոչ բարձր սարերով, վորոնք Կարսի Փաշալիկի բնական սահմանն եյին կազմում: Յերկինքը ծածկված եր ամպերով, յես հույս ունեյի, վոր ժամեժամ ուժեղացող քամբն նրանց կցրի: Բայց անձրեն սկսեց կաթկաթել և գնալով ալելի խոշորեց ու խտացավ: Պարնիքյոյից մինչև Գումրի 27 վերստ են հաշվում: Յես ամրացրի յափոննջուս փոկերը, հազարաշլուղս գլխարկիս վրայից և ինձ հանձնեցի նախախնամությանը:

Անցավ ավելի քան յերկու ժամ: Անձրել չեր դադարում: Զուրը շաշուալով թափվում եր ծանրացած յափունջուս և անձրեից հագեցած բաշլուղիս վրայից, Վերջապես սառը շիթն սկըսեց թափանցել փողպատիս տակով և շուտով անձրել թրչեց: Ինչև վերջին թելը: Գիշերը մութն եր. կողակը գնում եր առաջից, ցույց տալով ճանապարհը: Մենք սկսեցինք բարձրա-

նալ դեպի սարերը: Այդ միջոցին անձրել դադարեց և ամպերը ցրվեցին: Մէնչեւ Գումրի մնում եր մոտ տաս վերսու: Քամրն իրեն ազատ դզալով, այնքան ուժեղ եր փշում, վոր քառորդ ժամում ինձ բոլորովին չորացրեց: Յես չեյի կարծում, թե կխուսափեմ տենդախտից:

Վերջապես մոտ կես գիշերին հասա Գումրի, Կողակն ուղղակի ինձ բերեց պոստը: Մենք կանգ առանք վրանի մոտ, ուր շտապում եի յես մտնել: Աշտակի յես գտա տասներկու կողակ, կողք կողքի քնած: Ինձ տեղ տվին: Յես հոգնածությունից ինքու ինձ կորցրած ընկա յափունջուս վրա: Այդ որը յես անցել եյի նույնքուստիցի: Յես քնածի մեռաւի պես:

Կողակները ինձ զարթեցրին արշալույսին: Իմ առաջին միտքն եր.— արդյոք չերմով չեմ բռնված: Աշկայն դղացի, վոր փառք աստծո զվարթ եմ, առողջ: Վոչ միայն հիվանդության, այլև հոգնածության հետք չկար: Յես դուրս յեկա վրանից՝ առավոտյան թարմ ող ծծելու: Արել ծագում եր: Պարզ յերկնքի վըրա սպիտակին եր տալիս ձյունապատ, յերկուխանի մի սարք ի՞նչ սար ե, — հարցը ի յս ճմկոտալով և լսեցի պատասխան, — դա Արարատն ե: Վորքան զորավոր և հնչունների ներգործությունը: Ագանձարար նայում եյի յես բերլիխական սարին, տեսնում եյի տապանը, վոր կանգ եր առել նրա գաղաթին նորոգման և կյանքի հուսով— և զուրս թուզող ագուանին ու աղամին, պատժի և հաշտության սիմվոլներին...

Զիս պատրաստ եր: Ճանապարհ ընկանք ուղեկցողիս հետ: Առավոտը հիանալի յեր: Արել փալում եր: Մենք գնում եինք լայն մարգագետինով, ցողով ու յերեկվա անձրեկի կաթիլներով վոռոգված խիտ կանաչ խոտի վրալով: Մեր առաջ փայլում եր մի գետակ, վորը մենք պետք ե անցնեյինք: Ահա և Արփաչալը, — ասաց ինձ կողակը: Արփաչալը, մեր սահմանը, Դա արժեր Արարատին: Յես սուրացի գեպի գետը մի անմեկնելի զգացմունքով: Դեռ յերբեք ոտար յերկիր յես չեյի տեսել: Սահմանն ինձ համար ինչ վոր խորհրդավոր բան եր: Դեռ մանկության որերից ճանապարհորդությունն իմ սիրած յերազանքն ել լեղել: Հետապայօտ յես յերկար ժամանակ աստանդական կյանք եմ վարել, թափառելով մերթ հարավում, մերթ Հյուսիսում, և դեռ յերբեք անձալրածիր Ռուսաստանի սահմաններից դուրս չեյի:

յեկեւ: Յես ուրախությամբ մտա նվիրական գետը և լավ ձիս զուրս հանեց ինձ թուրքական ափը: Սակայն այդ ափն արդեն նվաճված եր.—յես դարձյալ գտնվում էի Ռուսաստանում:

Մինչեւ Կարս ինձ մնում եր ևս 75 վերստ: Իրիկնաղեմին յես հույս ունեցի տեսնելու մեր ճամբարը: Յես վոչ մի տեղ կանգ չեյի առնում: Կես ճանապարհին, սարերի մեջ, գետակի ափին շինած մի հայկական գլուղում ճաշի փոխարեն կերա յես անգետակ չյուրեկը՝ այն բլիթանման, մոխրի հետ կիսախառն թը-խած հայկական հացը, վորին այնքան կարոտում ելին թուրք գերիները Դարիալի կիրճում: Մեծ գին կտայի յես մի կտոր ռուսական սև հացի համար, վորը նրանց այնքան անախորժ եր: Ինձ ուղեկցում եր մի յերիտասարդ թուրք, վոր սարսափելի շատախոս եր: Նա ասբողջ ճանապարհը շատախոսում եր թուրքիրեն, չնոպալով այն մասին, թե արդյոք հասկանում եմ յես նրան թե վոչ: Յես լարում եի ուշադրությունս ու աշխատում եյի հասկանալ նրան: Թվում եր, թե նա մի թեթև հայհոյում եր ոռւսներին, սովոր լինելով նրանց բոլորին տեսնել համագ-գեստով, ինձ իմ հագուստիս պատճառով ոտարերկրացու տեղ եր լնդունում: Մենք հանդիպեցինք մի ոռւս սպալի: Նա գալիս եր մեր ճամբարից և ինձ հայտնեց, վոր բանակն արդեն կար-աից առաջ ե շարժվել: Չեմ կարող նկարագրել իմ հուսահատու-թյունը. այն միտքը, վոր յես ստիպված պիտի լինեմ վերա-դառնալ թիֆլիս, ամայի Հայաստանում զուր տեղը չարչարվե-լուց հետո, բոլորովին սպանում եր ինձ: Սպան գնաց իր ճա-նապարհով: Թուրքը նորից սկսեց իր մենախոսությունը, բայց յես արդեն ականջ չեյի դնում նրան: Յես ձիուս յորդան փոխե-ցի խոշոր վարդի և յերեկոյան հասա մի թուրքական գյուղ, վորը գտնվում եր Կարսից 20 վերստ հեռավորության վրա:

Վայր ցատկելով ձիուց, յես ուղում եի մտնել հենց առա-ջին լսրմիթը, բայց դունը յերեաց տերը և հայհոյանքով յետ հրեց ինձ: Յես նրա վողջունին պատասխանեցի մտրակով: Թուրքը սկսեց գուգոուալ, մարդիկ հավաքվեցին: Իմ ուղեկցողը, կարծեմ, ինձ պաշտպան կանգնեց: Ինձ ցուց տվին քարվան-սարան, յես ներս մտա մի մեծ գոմանման խրճիթ. տեղ չկար վոր յափնջիս կարողանալի փոել: Յես սկսեցի ձի պահանջել: Մոտս ցեկավ թուրք տանուտերը, նրա բոլոր անհասկանալի խոս-քերին, յես մի բան եյի պատասխանում:—վեր բանա ար (տուր-

քնձ ձի): Թուրքերը չեյին համաձայնվում: Վերջապես զլիի ըն-չա նրանց փող ցույց տալու (դրանից ել հարկավոր եր սկսել): Ձին իսկուն բերին և ինձ տվին ուղեկցող:

Յես գնացի լայն հովիտով, վորը ցըապատված եր սարերով: Շուտով յես տեսա Կարսը, վորը սպիտակին եր տալիս սարե-րից մեկի վրա: Իմ թուրքը ցույց եր տալիս ինձ այն, կրկնե-լով՝ Կարս, Կարս և չափ եր զցում իր ձին: Յես հետեւում եյի նրան, տանջլերով անհանգստությունից.—վիճակս պետք ե վո-րոշվեր Կարսում: Այստեղ յես պիտի իմանայի, թե վորտեղ ե գտնվում մեր ճամբարը, և թե հնարավորություն կունենամ արդյոք հասնելու բանակին: Այդ միջոցին յերկինքը ծածկից ամպերով և նորից տեղաց անձնե, բայց յես այդ մասին այլևս չեյի հոգում:

Մենք մտանք Կարս: Պարսպի գոանը մոտենալիս, յես լը-սեցի ոռւսական թմբուկի ձանը—զարկում եյին այգանվագ: Պահակն ընդունեց ինձնից իմ տոմսը և գնաց պարետի մոտ: Յես անձրեսի տակ կանգնած մնացի մոտ կես ժամ: Վերջապես ինձ սերս թողին: Յես պատվիրեցի ուղեկցողիս, վոր ուղեղ ինձ բաղանիք տանիք: Մենք գնացինք ծուռ, զառիթափ փողոցներով: Ճիերը սայթաքում եյին թուրքական վատ մայթի վրա: Կանգ առանք մի բավականին վատ տեսք ունեցող տան առաջ: Այդ բաղանիքն եր: Թուրքը իջավ ձիուց և սկսեց բախել դուռը: Վոչ վոք չեր պատասխանում: Անձրես շոշակով թափկում եր վրաս: Վերջապես մոտիկ տնից դուրս յեկավ մի յերիտասարդ հայ և բանակցելով թուրքիս հետ, կանչեց ինձ իր մոտ, խոսելով բա-վական մաքուր ոռւսերեն: Նա ինձ նեղ սանդուխքով տարավ իր տան յերկրորդ մասը: Ցածր բաղկաթոռներով և հին գորգե-րով կահավորված սենյակում նստած եր մի պառավ կին, նրա մայլը: Նա մոտեցավ ինձ և համբուրեց իմ ձեռը: Վորդին պատ-վիրեց նրան կրակ անել ու ինձ համար լնթթիք պատրաստել: Յես հանվեցի ու նստեցի կրակի մոտ: Ներս մտավ տանտիրով փոքր յեղբայրը, մոտ տասնյոթ տարեկան տղա: Յերկու յեղ-բայրն ել յեղել եյին թիֆլիս և այնտեղ ապրել մի քանի ամիս: Նըանք ինձ ասացին, վոր մեր զորքերը առաջ են շարժ-վել նախընթաց որը և վոր մեր ճամբարը գտնվում ե Կարսից 25 վերստ հեռու: Յես բոլորովին հանգստացա: Շուտով պառավը ինձ համար պատրաստեց վոչխարի միս սոխով, վորն ինձ խո-քերին, յես մի բան եյի պատասխանում:—վեր բանա ար (տուր-

հարարական արվեստի գաղաթնակետը թվաց: Մենք բոլոր պառկեցինք միւնույն սենյակում: Յես պառկեցի մարվող բուշարու զիմաց և քննեցի այն հաճելի հուզով, վոր մյուս որը պիտի տեսնեմ կոմս Պասկեիչի ճամբարը:

Առավոտյան գնացի քաղաքը դիտելու: Տանտերերիցս փոքրը հանձն առավ իմ չիչերոնը լինելու: Դիտելով ամրություններն ու միջնաբերդը, վոր շինված և անմատչելի ժայռի վրա, յես չեցի հասկանում, թե ինչպես ենք մենք կարողացել տիրանալ կարսին: Իմ հայը բացատրում եր ինձ, ինչպես կարողանում եր, ուղմական գործողությունները, վորոնց նա ականատես եր յեղել: Նկատելով նրա ձկտումը դեպի պատերազմը, յես առաջարկեցի նրան գնալ ինձ հետ բանակ: Նա սիրով համաձայնվեց: Յես ուղարկեցի նրան ձիեր բերելու: Նա վերադարձավ մի սպազի հետ, վորն ինձնից պահանջեց զրավոր հրաման: Նրա ասիական դիմագծերից դատելով, յես հարկավոր չհամարեցի քրքրել թղթերս և հանեցի զրապանիցս հենց առաջին ձեռքս ընկած թերթիկը: Սպան փեկելով սկսեց դիտել այն, իսկույն հրամայեց ձիեր բերել նորին բարեծնդության համար ըստ հրամանազբի և վերադարձեց ինձ իմ թուղթը: Դա մի ձռն եր նվիրված մի կալմիկունու, վոր յես խղզել եյի Կովկասյան կացարաններից մեկում:

Կես ժամ հետո մեկնեցի կարսից, և Արտեմը (ալղպես եր կոչվում իմ հայը) արդեն արշավում եր կողքիս թուրքական հովատակի վրա, քրդական ձկուն տեղը ձեռին, դաշունը գոտին խրած, և զառանցելով թուրքերի ու ճակատամարտերի մասին:

Յես անցնում եյի մի վայրով, ուր ամենուրեք ցորեն եր ցանած: Չորս կողմն էրենում եյին գլուղիր, բայց նրանք դատարկ եյին.—բնակիչները փախել եյին: Ճանապարհը հիանալի յեր և խրուտ տեղերը սալահատակած—առուների վրա շինված եյին քարե կամուրջներ: Հողը նկատելի կերպով բարձրանում եր—Սողանլուղի լեռնաշղթավի՝ հին Տավրոսի առաջավոր բլուրներն սկսում ելին յերեալ: Անցավ մոտ յերկու ժամ, յես բարձրացա թեթև զարիվեր մի բարձրավանդակի վրա և հանկարծ տեսա մեր ճամբարը, վոր տեղավորված եր կարսաչայի ափին: Մի քանի բոված անց յես արդեն Ուշակու վրանումն եյի:

ԳԼՈՒԽ ՑԵՐՌՈՐԴ

Սողանլուղի վրայով անդնելը: Հբաձղություն: Ճամբարային կյանք: Ցեղանիքը: Ճակատամարտ Արգրումի սերակերի հետ: Պայթեցրած խրճիթ:

Յես յեկա ժամանակին: Նույն որը (հունիսի 13-ին) զորքը հրաման ստացավ առաջ խաղալ: Ու <այսկու> մոտ ճաշելիս, յես լսում եյի յերիտասարդ գեներալների դատողություններն իրենց առաջիկա շարժման մասին: Գեներալ Բուրցովը ուղարկված եր դեպի ճախ Արգրումի մեծ ճանապարհով, ուղղակի թուրքական ճամբարի գեմ, այն ինչ մնացյալ բոլոր զորքը աջ կողմով պետք ե անցնել թշնամու թիկունքը:

Հինգերորդ ժամին զորքը առաջ շարժվեց: Յես գնում եյի նիմեկորոյդյան Դրագունների գնդի հետ, խոսելով Ու <այսկու> հետ, վորին արդեն մի քանի տարի էր, յես չեյի տեսել: Վրա հասալ գիշերը: Մենք կանգ առանք հովտում, ուր դադար եր արել ամբողջ զորքը: Այստեղ յես պատիվ ունեցա ներկայանալու կոմն Պասկեիչին:

Յես կոմսին գտա տանը բիվակի կրակի մոտ, շրջապատված իր շտաբով: Նա ուրախ եր և ընդունեց ինձ սիրալիր կերպով: Հեռու լինելով ուղմական արվեստից, յես բնավ չեյի կարծում, վոր արշավանքի յելքը վորոշվում եր այդ բուլեյին: Այստեղ տեսա յես մեր Վ <ալիսովսկուն>, վոտից զլուխ փոշտված, միշտուքը բուսած, հոգսերից հյուծված: Նա, սակայն, վորպես հին ընկեր, ժամանակ գտավ ինձ հետ զրուցելու: Այստեղ տեսա յես նաև Մ <իխայիլ> Պ <ուչկինին>, վորն անցայալ տարի վիրավորված եր: Նա սիրված եր ու համբված, վորպես հիանալի ընկեր և քաջ զինվոր:

Իմ հին բարեկամներից շատերը շրջապատեցին ինձ: Ինչ-
պես ելին նրանք փոխվել, ինչպէ՞ս արագ և անցնում ժամա-
նակը:

Heu! fugaces, Posthume, Posthume,
Labuntur anni...¹⁾

Յես վերադարձա մու <այսակու> մոտ և գիշերեցի նրա վրա-
նում: Գիշերվա կեսին ինձ զարթեցրին սարսափելի աղաղակ-
ները—կարելի եր կարծել թե թշնամին անսպասելի հարձակում
և գործել: Մու <այսակին> ուղարկեց իմանալու տագնապի պատ-
ճառը—մի քանի թուրքական ձիեր, կապից պոկված, վաղվզում
ելին ճամբարի մեջ և մուսուլմանները (այդպես են կոչվում մեր
զորքում ծառալող թուրքերը) նրանց բռնում ելին:

Արշալույսին զորքը առաջ շրթվեց: Մոտեցանք անտառա-
պատ սարերին: Մտանք ձորը: Դրագունները միմյանց ասում
ելին. տես, յեղբայր, պինդ կաց, հա, հրես կարտել և թափելու:
Իսկապես տեղադրությունը նպաստավոր եր զարանակալության
համար: Բայց թուրքերը այլ կողմ զրագված, գեներալ թուրքովի
շարժումով չոգտվեցին հարմար միջոցից: Մենք հաջողությամբ
անցանք վտանգավոր ձորը և կանգնեցինք. Սողանլուղի բար-
ձունքներում, թշնամու ճամբարից 10 վերստ հեռավորության
վրա:

Բնությունը մեր շուրջը մաայլ եր: Ողը ցուրտ եր, սարերը
ծածկված ելին տրտմատեսիլ սոճիներով: Զորակում ձյուն կար-

Usque nec Armeniis in oris,
Amice Valgi, stat glacies iners
Menses per omnes...²⁾

Հաղիվ կարողացանք մենք հանգստանալ և ճաշել, յերբ լը-
սեցինք հրացանածգության ձախներ: Մու <այսակին> ուղարկեց
տեղեկանալու: Նրան զեկուցեցին, վոր թուրքերը յերկուստեք
հրաձգության եր բռնվել մեր առաջավոր պիկետների հետ: Յետ
Մ <եմիչնի> հետ գնացի դիտելու ինձ համար նոր այդ տեսարանը:
Մենք հանդիպեցինք վիրավոր կողակի: Նա յերերալով նստած
եր թամբի վրա գունատված և արյունոտված: Յերկու կողակ
պահում ելին նրան: Շատ են թուրքերը հարցրեց Մ <եմիչնի>:
Խողի նման վրա լե տալիս, ձերդ բարեծնդություն,—պատաս-
խանեց նրանցից մեկը:

1) <Ալադ, Պոսթում, Պոսթում սլանում են արագալազ տարիները>...

2) <Յեշ Հայաստանի ափերը, իմ բարեկամ Վալդիս, վոչ բոլոր ամիս-
ներն են կաջանդված անշարժ սառայցով>

Չորն անցնելով, մենք հանկարծ տեսանք դիմացը սար-
լանջին մոտ 200 կողակ, վորոնք շարված ելին լավայով: Նրան-
ցից վերև մոտ 500 թուրք: Կողակները դանդաղորեն յետ ելին
քաշվում: Թուրքերը վրա ելին տալիս մեծ հանդգնությամբ,
նշան ելին բռնում 20 քայլից և կրակելով, յետ ելին արշավում:
Նրանց բարձր չալմաները, գեղեցիկ գուլիմանները և ձիերի փայ-
լուն սարքը խիստ հակապատկերն ելին կողակների կապույտ
համազգեստների և հասարակ ձիասարքի: Մերոնցից մի 15 մարդ
արդեն վիրավորվել եր: Յենթագնդապետ Բասովը ուղարկեց
ոգնություն խնդիրներու: Այդ ժամանակ նա ինքը վերք սատացավ
վոտից: Կողակները քիչ խառնվեցին: Բայց Բասովը նորից ձե-
նստեց և մնաց իր զորախմբում: Ոգնությունը հասավ: Թուրքերն
այդ նկատելով, իսկույն անհայտացան, թողնելով սարի վրա
կողակի գլխատված ու անդամանատված մերկ դիակը: Թուր-
քերը կտրած գլուխներն ուղարկում են կոստանդինոպոլիս, իսկ
ձեռների դաստակները, թաթախելով արյան մեջ, դրոշմում են
իրենց դրոշակների վրա: Հրածգությունը հանդարտվեց: Արծիվ-
ները, զորքերի այդ ուղեկիցները ճախրեցին սարի վերելը,
բարձունքից իրենց համար ավար փնտրելով:

Այդ ժամանակ զեներալների ու սպաների մի խումբ յե-
րեվաց.—կոմս Պասկիիը յեկավ և գնաց գեպի սարը, վորի
յետև թագնվել ելին թուրքերը: Նրանք զորացված ելին 4000
հեծելազորով, վոր թագնված եր լեռնագոգում ու ձորակներում:
Սարի բարձունքից մեր առաջ բացվեց թուրքական ճամբարը,
վորը մեղանից բաժանված եր ձորակներով և բարձունքներով:
Մենք ուշ վերադարձնք: Մեր ճամբարով անցնելիս յետ տեսա-
մեր վիրավորներին, վորոնցից 5 մարդ մեռան նույն գիշերը
և մյուս որը: Յերեկոյան այցելեցի յետ յերիտասարդ Ոստեն-Սա-
կենին, վորը վիրավորվել եր նույն որը ուրիշ ճակատամարտում:

Ճամբարային կյանքն ինձ շատ գուր եր գալիս: Թհնդանոթը
մեղ վեր եր կացնում արշալույսին: Քունը վրաններում զար-
մանալի առողջարար ե: Ճաշին մենք ասիական խորովածի վը-
րայից խմում ելինք անգլիական գարեջուր և տավրյան ձյու-
ներում սառցրած շամպայն: Մեր հասարակությունը բազմազան
եր: Գեներալ Ռայնեսկու գրանում հավաքվում ելին մուսուլմա-
նական գնդերի բեկերը և զրույցը տարվում եր թարգմանի մի-
ջոցով: Մեր զորքի մեջ կային թե մեր անդրկովկասայան մար-

զերի ժողովուրդներ և թե նոր նվաճված յերկիրների բնակիչներ։ Դրանցից յետ ավելի հետաքրքրությամբ նայում են յեղիդների վրա, վորոնք արեւելքում դիվապաշտ են համարվում։ Մոտ 300 ընտանիք բնակվում են Արարատի ստորոտում։ Նըշանք ընդունեցին ոռուաց թագավորի տիրապետությունը։ Նըշանց պետը, վոր բարձրահասակ ու այլանդակ մի տղամարդ եր, կարմիր թիկնոցով ու սև գլխարկով, գալիս եր յերբեմ վողջույնի ամբողջ հեծելազորի պետ գեներալ Ռայենվակումուտ։ Ենս աշխատում են յեղիդից իմանալ ճշմարտությունը նրանց հափատի զավանության մասին։ Իմ հարցումներին, նա պատասխանում եր, վոր այն համբավը, թե իբր յեղիդները յերկրպագում են սատանային, դատարկ առասպել ե, վոր նրանք մի աստըծու յեն հավատում, վոր նրանց որենքով դեկին անիծելը, ճիշտե, համարվում է անվայիլ և անաղնիվ բան, վորովհետեւ նա հիմա անբախտ ե, բայց ժամանակով կարող ե ներումն ստանալ, վորովհետեւ չի կարելի սահմաններ դնել Ալլահի վողորձածության։ Այդ բացատրությունն ինձ հանգստացրեց։ Յես շատ ուրախ եյի յեղիդների համար, վոր նրանք սատանային չեն յերկրպագում, և նրանց մոլորություններն ինձ արդեն շատ ավելի ներելի թվացին։

Իմ ծառան ճամբար հասավ ինձնից լեբեք որ հետո. Նա յեկալ գումակասյան հետ, վորչ թշնամու աչքի առաջ աջողությամբ միացավ բանակին. NB. — ամբողջ արշավանքի ժամանակ մեր բաղմաթիվ գումակից վոչ մի սայլ չեր ընկել թշնամու ձեռքը. Այն կարգը, վորով գումակը հետեւում եր զորքին, խսկապես վոր զարմանալի յե.

Հունիսի 17-ին առավոտյան մենք նորից լսեցինք հրաձգության ձայներ և յերկու ժամից հետո տեսանք Ղարաբաղյան գունդը, վորը վերադառնում եր ութի թուրքական գրոշակներով ֆնտապետ Ֆրեդերիկսը զործ եր ունեցել քարհապահների յետեղ դարան մտած թշնամու հետ, գուրս եր մղել նրանց և քշել։ Հեծելազորի պետ Ռաման-Փաշան հաղիվ եր կարողացել փրկվել։

Հունիսի 18-ին ճամբարը տեղափոխվեց ուրիշ տեղ: 19-ին հաղիվ թնդանոթը արթնացրեց մեղ, ամեն ինչ ճամբարում շարժվեց: Գեներալները գնացին դեպի իրենց պոստերը: Զորագնդերը շարվում ելին, սպաները կանգնում ելին իրենց դասակների մոտ: Յես մնացի մենակ, չիմանալով, թե վար կողմը գնամ:

Ճիս թողի աստծու կամքին: Յես հանդիպեցի գեներալ Բուրցովին, վորն ինձ կանչեց դեպի ձախ թեր: Ի՞նչ բան է ձախ թեր, — մտածեցի յես և շարունակեցի ճանապարհս: Յես տեսա գեներալ Մուրավյովին, վորը դասավորում եր թնդանոթները: Շուտով յերեացին դելի-բաշները և սկսեցին պատավել հովովի մեջ, հրաձըգության բռնվելով մեր կողակների հետ: Այդ միջոցին նրանց հետեազորի մի խիտ բազմություն անցնում եր հովտով: Գեներալ Մուրավյովը հրամայեց կրակել: Կարտեչը բռնեց հենց բազմության մեջ տեղիցը: Թուրքերը մի կողմ հորդեցին ու թագնըցին բարձրության յետեւ: Յես տեսա կոմս Պատկեհին, շրջապատված իր շտաբով: Թուրքերը շրջանցում եյին մեր զորքը, վորը բաժանված եր նրանցից խոր ձորակով: Կոմմսն ուղարկեց Պ <ուշինին> դիտելու ձորակը: Պ <ուշինն> արշավեց: Թուրքերը նրան ձիավորի տեղ լնդունեցին և նրա վրա համազարկ տվին: Բոլորը ծիծաղեցին: Կոմմսը հրամայեց դուրս բերել թնդանոթներն ու կրակել: Թշնամին ցըկեց դեպի սարն ու ձորակը: Զախ թեռն, ուր ինձ կանչում եր Բուրցովը, տաք կոփվ եր տեղի ունենում: Մեր առաջը (կենտրոնի դիմաց) արշավում եր թյուրքական հեծելաղորը: Կոմմսն ուղարկեց նրա դեմ գեներալ Ռայվակուն, վորը գրոհի տարավ Նիժեսկորդյան գունդը: Թուրքերն անհետացան: Մեր թյուրքերը շրջապատում եյին նրանց վրաց վորներին և արագորեն հանում նրանց շորերը, մերկ թողնելով դաշտի մեջ: Գեներալ Ռայվակին կանգ առավ ձորակի յեղին: Եերկու եսկաղըն, բաժանվելով գնդից, գրավվել եյին իրենց հետապնդումով: Նրանց վրկեց գնդապետ Սիմոնիչը:

Ճակատամարտը հանդարսվեց. թուրքերը մեր աչքի առաջ սկսեցին գետինը քանդել ու քարեր կրել, ամրանալով, ըստ իրենց սովորության: Նրանց հանգիստ թողին: Մենք իշխանք ձիերից և սկսեցինք ճաշել, ինչ աստված տվել եր: Այդ ժամանակ կոմսի մոտ բերին մի քանի գերի: Մեկը նրանցից սաստիկ զիրավորված եր: Նրանց հարցուփորձ արին: Մոտ ժամի 6-ին զորքերը նորից հրաման ստացան գնալ թշնամու դեմ: Թուրքերը շարժվեցին իրենց քար-կապանների լեռել, դիմավորեցին մեղ թնգանոթալին կրակով և շուտով սկսեցին նահանջել: Մեր հեծելազորը գնում եր առջևից: Մենք սկսեցինք իջնել զեպի ձորակը: Ձիերի վոտների տակ հողը պոկվում և թափվում եր: Ամեն բոպե իմ ձին կարող եր ընկնել և այն ժամանակ ամբողջ

ուղանական գունդը կանցներ իմ վրայով։ Սակայն աստվածապահեց։ Հազիվ դուրս լեկանք սարերի վրա ընկած լայն ճանապահն, սեր ամբողջ հեծելազորն իսկույն արշավեց ամբողջ թափով։ Թուրքերը փախան, Կողակները մտրակելով ճանապահնին ձգած թնդանոթները, ոլանում եյին նրանց մոտով։ Թուրքերը նետվում եյին ճանապահնի յերկու կողմում գտնվող ձորակները։ Նրանք այլևս չեն կրակում։ Պոնե վոչ մի գնդակ չանցավ ականջներիս մոտով։ Հետապնդողներից առաջինները մեր թյուրքական գնդերն եյին, վորոնց ձիերը աչքի յեն ընկենում արագությամբ և ուժով։ Իմ ձին սանձակոտոր յեղած նըրանցից յետ չեր մնում։ Յես հազիվ եյի կարողանում նրան պահել Նա կանգ առավ մի յերիտասարդ թյուրքի դիակի մոտ, վորն ընկած եր ճանապահնի լայնքով։ Նա, թվում եր, մոտ 18 տարեկան եր. զունատ, կուսական դեմքը չեր այլանդակված։ Նրա չալման ընկած եր փոշու մեջ, թրաշած ծոծրակը ծակված եր գնդակով։ Յես քշեցի քայլով, Շուտով հասավ ինձ <Ռայելս կին>։ Նա մի կտոր թղթի վրա մատիտով զեկուցում գրեց կոմս Պասկեվիչին թշնամու կատարյալ պարտության մասին և առաջ գնաց, Յես հետեւում եյի նրան հեռվից։ Վրա հասավ գիշերը, իմ հոգնած ձին յետ եր մնում և սայթաքում եր ամեն քայլափոխում, կոմս Պասկեվիչը հրամայեց չգագարեցնել հետապնդումը և ինքն եր այն դեկալարում։ Գալիս անցնում եյին մեր հեծլալ ջոկատները։ Յես տեսա գնդապետ Պոլյակովին, այդ որը կարեռ գեր կատարած կողակների հրետանու պետին և նրա հետ միասին յեկա մի ձգած գյուղ, վորտեղ կանգ եր առել կոմս Պասկեվիչը, հետապնդումը դադարել եր. վրա հասած գիշերվապատճառով։ Մենք գտանք կոմսին զետնափոր խրճիթի կառուրին, կրակի մոտ։ Նրա մոտ բերում եյին գերիներին։ Այստեղ եյին նաև համարյա բոլոր պետերը, կողակները սանձերը բոնած պահում եյին նրանց ձիերը։ Կրակը լուսավորում եր մի պատկեր, վորն արժանի յեր Սալվադոր-Ռոպային, գետակն աղմկում եր խավարի մեջ։ Այդ ժամանակ կոմսին զեկուցեցին, վոր գյուղում կան պահած վառողի պաշարներ և վոր պետք ե յերկուող կրել պայթյունից, կոմսը թողեց խրճիթին իր ամբողջ շքախմբով։ Մենք գնացինք դեպի մեր ճամբարը, վորը գտնվում եր արդեն 30 վերստ հեռավորության վրա այստեղից, ուր մենք գիշերել եյինք, Ճանապահնը լիքն եր հեծյալ ջոկատներով։ Հազիվ մենք հա-

սանք տեղ, յերբ հանկարծ յերկինքը լուսավորվեց, կարծես թե մեթեռով և մենք լսեցինք խոռվ պայմանուն։ Այն խրճիթը, վոր մենք թողինք քառորդ ժամ առաջ՝ հողս եր ցնդել։ —այնտեղ եր պահած յեղել վառողի պաշարը։ Ցրիվ յեկած քարերը տակովն եյին արել մի քանի կողակի։

Ահա այս բոլորը, ինչ վոր կարողացա յես տեսնել այն ժամանակ։ Յերեկոյան յես իմացա, վոր այդ ճակատամարտում ջարդ ներ կրել Արզրումի սերասկիրը, վորը 30000 զորքով գնում եր միանալու Հակի-Փաշայի հետ։ Սերասկիրը փախել եր դեպի Արզը բում։ Նրա զորքը, վորը հետ եր մղված Սողանլուղի մյուս կողմը, ցրվել եր, հրետանին վերցված եր և Հակի-Փաշան մենակ եր մնացել մեր ձեռքին։ Կոմս Պասկեվիչը նրան ժամանակ չտվեց կարգադրելու։

Ճակատամարտ Հակի-Փաշայի հետո Թյուրք բեկի մահը Հերմոֆրոդիտ Քերի փաշան։ Արաքս Հովլի կամուրջը, Հասսան Ղալատ, Տաք աղբյուր։ Արշականք գեղակի Արզում, Բանակցություններ։ Արզումի առումը Թուրք գերիներ, Դերվիշ։

Մյուս որը հինգերորդ ժամին ճամբարը զարթնեց ու հըրաման ստացավ առաջ շարժվել։ Դուրս գալով վրանոց յես հանդիպեցի կոմս Պասկեիչին, վորն ամենից առաջ եր վեր կացել։ Նա տեսավ ինձ։ «Etes vous fatigued de la journée d'hier?» Mais un peu, Mr. le Comte. J'en suis fâché pour vous, car nous allons faire encore une marche pour joindre le Pacha, et puis il faudra poursuivre, l'ennemi encor une trentaine de verstes»¹⁾.

Մենք շարժվեցինք և ժամը մոտ ութին հասանք մի բարձր տեղ, վորից Հակի-Փաշայի ճամբարն յերեսում եր, վորպես ափի վրա։ Թուրքերն իրենց բոլոր մարտկոցներից անվնաս կրակ բաց արին։ Այդ միջոցին նրանց ճամբարում նկատվում եր մեծ շարժում։ Հոգնածությունն ու առավոտյան շոգը մեղանից շատերին հարկադրեցին իջնել ձիերից և պառկել թարմ խոտի վրա։ Յես սանձափոկ փաթաթեցի ձեռքիս և քաղցր քնեցի, սպասելով առաջ շարժվելու հրամանին։ Քառորդ ժամ անց ինձ դարթեցրին։ Ամեն ինչ շարժման մեջ եր, Մի կողմից զորասյուները շարժվում եյին թուրքական ճամբարի վրա, մյուս կողմից՝ հեծելակողը պատրաստվում եր հետապնդելու թշնամուն։ Յես գընացի նիշեգործան գնդի յետելից, բայց իմ ձին կաղում եր։

1) <Դուք չեք հոգնել յերեկանից հետու - Մի քիչ, պ. կոմս - Շատ վրշտացած եմ ձեր փոխարեն, վորովհետեւ մենք պետք են մի չվերթ կատարենք. վորպեսզի հասնենք փաշային, իսկ զրանից հետո գեռ հարկ կլինի մի յերեսուն վերստ ել հետապնդել թշնամուն>։

Յես յետ մնացի։ Իմ մոտով անցավ ուշանական գունդը։ Հետո Վ. <ոլխովսկին> սուրաց յերեք թնդանոթներով։ Յես մընացի մենակ անտառապատ սա, երում։ Յես հանդիպեցի մի դըրագունի, վարն ինձ հայտնեց, թե անտառը լիքն ե թշնամիներով։ Յես վերադարձաւ։ Յես հանդիպեցի գեներալ Մ <ուրավովին> մի հետեւակ գնդի հետ միասին։ Նա մի վաշտ ուղարկեց անտառը, մաքրելու այն թշնամիներից։ Մոտենալով ձորակին, տեսա յետմի արտասովոր տեսարան։ Ծառի տակ պառկած եր մեր թյուրք բեկերից մեկը՝ մահացու կերպով վիրավորված, նրա մոտ հեկեկում եր նրա սիրելին։ Մոլլան, ծունկ չոքած, աղոթում եր։ Մեռնող բեկը չափաղանց հանգիստ եր և անշարժ նայում եր իր յերիտասարդ բարեկամին։ Զորակում հավաքված եյին մոտ 500 գերի։ Մի քանի վիրավորված թուրքեր նշաններով կանչում եյին ինձ, յերեկ ինձ բժշկի տեղը նորունելով, և պահանջնելով ոգնություն, վորը յես չեմ կարող նրանց տալ։ Անտառից դուրս յեկավ մի թուրք, սեղմելով իր վերքը արյունոտված շորի կտորով։ Զինվորները մոտեցան նրան, վորպեսզի սվինահար անեն, գուցե մարդասիրությունից դրդված։ Բայց այդ ինձ չափաղանց վրդովեցրեց։ Յես պաշտպանեցի խեղճ թուրքին և հազիվ հազ նրան ուժասպառ և արյունաքամ յեղած վիճակում բերի իր ընկերների մոտ։ Նրանց մոտ եր գնդապետ Ա <Նորեպը>։ Նա բարեկամարար ծխում եր նրանց ծխամորճերից, չնայած, վոր լուրեր կային ժանտախտի մասին, վորն իբրև թե յերեացել ե թուրքական ճամբարում։ Գերիները նստած հանգիստ խոսում եյին իրար հետ։ Համարյա թե բոլորն ել յերիտասարդ եյին։ Հանգըստանալով, մենք առաջ գնացինք։ Ամբողջ ճանապարհին ընկած եյին դիակներ։ 15 վերստի վրա յես գտա նիժեգորոդյան գունդը, վորը կանգ եր առել վետակի ափին ժայռերի մեջ։ Հետապնդումը շարունակվեց ես մի քանի ժամ։ Իրիկնազեմին մենք հասանք խիտ անտառով շրջապատված մի հովիտ, և վերջապես յես կարող եյի ուղածիս չափ քնել այս յերկու որում ձիով անցնելով ավելի քան ութսուն վերստ։

Մյուս որը թշնամուն հետապնդով զորքերը հրաման ստացան վերադառնալ ճամբարը։ Այսեղ մենք իմացանք, վոր գերիների մեջ կա մի հերմոֆրոդիտ։ Մ <այսեկին> իմ խնդրանոք, հրամայեց բերել նրան։ Յես տեսա բարձրահասակ, բավականին հաստ մի մարդ, վորը դեմքով նման եր պառակ, կարճ քը-

թանի չուխոնուհու: Մենք դիտեցինք նրան բժիշկի ներկայությամբ: Erat vir, mammosus, ut femina, habebat t<esticulos> non evolutos, p<enem>que parvum et puerilem. Quaerebamus, sit ne exsectus?—Deus, respondit, castrav'itme:

Սույն հիվանդությունը, վոր հայտնի յե յեղել Հիպոկրատեսին, ըստ ճանապարհորդների վկայության, հաճախ եպատահում քոչվոր թաթարների ու թուրքերի մոտ: Իս թուրքական անունն ե սույն կարծեցյալ հերձաֆրողիտների:

Մեր զորքը կանգնած եր նախորյակին վերցրած թուրքական ճամբարում: Կոմս Պասկեիչի վրանը գտնվում եր մեր կողակների կողմից գերված Հակի-Փաշայի կանաչ վրանի մոտ: Յես գնացի նրա մոտ և նրան գտա շրջապատված մեր սպանեցով: Նա նստած եր ծալապատիկ և ծխամորճ եր ծխում: Նա մոտ քառասուն տարեկան եր յերեսում: Ծանրակշություն ու խորին հանգստություն եր արտահայտում նրա գեղեցիկ գեմքը: Անձնատուր լինելով, նա խնդրել եր, վոր տան իրեն մեկ բաժակ սուրճ և աղատեն իրեն հարցուփորձից:

Մենք կանգնած եյինք հովտում: Սողանլուղի ձյունապատ և անտառապատ լեռներն արդեն մեր յետեն եյին մնացել: Մենք առաջ գնացինք, այլև վոչ մի տեղ չհանդիպելով թշնամուն: Գյուղերը դատարկ եյին: Շրջապատը տիրավի յեր: Մենք տեսանք Սրաքը, վորն արագ հոսում եր իր քարքարոս ափերի միջով: Հասան-Ղալայից 15 վերստ հեռու գտնվում եր մի կամամարդի վրա: Ավանդությունը վերագրում ե նրա կառուցումը հարստացած մի հովվի, վորը մեռել ե վորպես ճգնավոր բլուրի գլխին, ուր մինչեւ այժմ ել ցույց են տալիս նրա զերեղամանը յերկու մենափոր սոճիների հովանու տակ: Հալեան շինականները ուխտի յեն գալիս այստեղ: Կամուրջը կոչվում ե Զոբան-Քեփրի (Հովվի կամուրջ): Թավրիվի ճանապարհն այստեղով ե անցնում:

Կամուրջից մի քանի քայլ հեռու յես այցելեցի քարվանսարայի մոայլ ավերակները: Այստեղ վոչ վոք չկար, բացի մի հիվանդ եշից, վորին յերսի ձգել ելին այստեղ փախչող մինականները:

Հունիսի 24-ին առավոտյան մենք գնացինք գեղի Հասան-Ղալահին բերդը, վորը նախընթաց որը զրավել եր իշխան Բնկովիչը: Նա գտնվում եր 15 վերստ հեռավորության վրա մեր զիշերոթի տեղից: Յերկար չվերթները հոգնեցրել ելին ինձ: Յես հույս ունեցի հանգստանալու, բայց այլ կերպ գուրս լեկավ:

Հեծելազորի լելույթից առաջ մեր ճամբարը յեկան լեռներում բնակվող հայեր, պահանջելով պաշտպանություն թուրքերից, վորոնք յերեք որ դրանից առաջ քշել ելին նրանց տավարը: Գնդապետ Ա. <նրեպը> լավչասկանալով, թե ինչ են նըրանք ուղղում, կարծեց, Յես ինչ վոր թուրքական ջոկատ կա սարերում և ուղանական գնդի մի եսկազրոն հետ գնաց մի կողմի վրա, հայտնելով Ու <այսկուն>, վոր 3000 թուրք գտնվում են սարերում: Ու <այսկին> գնաց նրա յետերից, նրան վտանգի դոպւմ ոգնելու համար: Յես ինձ գործուղված եյի համարում Նիժեղորոդյան գնդին և մեծ տհաճությամբ արշավեցի հայերին ազատելու: Անցնելով մի քոսն վերստ, մենք մտանք մի զյուղ, և տեսանք մի քանի յետ մնացած ուղաններ, վորոնք ձնուց իջած, մերկացած թրերով հետապնդում ելին մի քանի հավերի: Այստեղ շինականներից մեկը բացատրեց Ու <այսկուն>, վոր խոսքը 3000 բնեղների մասին եր, վոր յերեք որ առաջ քշել ելին թուրքերը և վորոնց շատ հետ կլինի հասնել յերկու որում Ու <այսկին> հրամայեց ուաննեսեն դադարեցնել հավերի հետապնդումը և հրաման Ուղարկեց գնդապետ Ա. <նրեպը> վերադառնալու: Մենք յետ դարձանք և, դուրս գալով լեռներից յեկանք Հասան-Ղալայի տակը: Այդպիսով մենք 40 վերստ պտույտ տվինք, վորպեսզի մի քանի հայկական հավերի կյանքը փրկած լինանք, մի բան, վոր ինձ բնավ վլարձալի չեր թվում:

Հասան-Ղալան համարվում ե Սրբումի բանալին: Քաղաքը շինված ե բերդով պահպակած ժայռի ստորոտում: Այստեղ մոտ հարյուր հայ ընտանիք կար: Մեր ճամբարը գտնվում եր բերդի առաջ ձգված լան հարթավայրում: Այստեղ յես այցելեցի մի կլոր քարե շինություն, վորի մեջ գտնվում ե մի յերկաթեծ մարդարկին չերմուկ:

Կլոր ավաղանն ունի մոտ յերեք սաժեն տրամագիծ: Յես յերկու անդամ լողալով անցա ավաղանի մի ծալքից մյուսը և հանկարծ գլխապտույտ ու սրտի խառնոց զգացի, ու հազիվ ուժունեցա գուրս գալու աղբյուրի քարե լեզրը: Այդ լրերը հոչակ-

ված էն Արեւելքում, բայց չունենալով կարդին բժիշկներ, բնաշկիչներն ոգտվում են նրանցից ինչպես պատահի և յերեխ առանց մեծ հաջողության:

Հասան-Ղալայի պարիսպների տակ հոսում ե Մուրզու <1>
գետակը, վորի ափերը ծածկված են յերկաթե աղբյուրներով, վորոնք խփում են քարերի տակից և հոսում գեպի գետը: Նըրանք այնքան ախորժահամ չեն, վորքան կովկասի նարզանը, և պղնձի համ են տալիս:

Հունիսի 25-ին, թագավոր կայսրի անվանակոչության որը մեր ճամբարում բերդի պարիսպների տակ զորագնդերը մաղթանք կատարեցին: Ճաշին կոմս Պասկեիչի մոտ եյինք, և յերբ խմում եին թագավորի կենացը, կոմսը հայտարարեց արշավանք գեպի Արզում: Յերեկոյան ժամը հինգին զորքն արդեն դուրս յեկավ:

Հունիսի 26-ին մենք հասանք Արզումից հինգ վերստի վրա գտնվող սարերին: Այդ սարերը կոչվում են Աղ-Դաղ (սպիտակ սարեր). Նրանք կավճային են: Սպիտակ կծու փոշին ուտում եր մեր աշքերը, նրանց տրտում տեսքը թափիծ եր առաջացնում: Արզումի մոտիկությունը և արշավանքի ավարտման վատահությունը միխթարում եր մեզ:

Յերեկոյան կոմս Պասկեիչը գնացել եր գիտելու տեղողը՝ թուրք ճիշավորները, վոր ամբողջ որը պառյատ եյին գալիս մեր ալիկետների առաջ, սկսեցին կրակել նրա վրա: Կոմսը մի քանի անգամ սպառնաց նրանց մտրակով, չգաղարելով խորհըրդակցել գեներալ Մ <ուրավովի> հետ: Նրանց կրակոցներին չեղին պատասխանում:

Այդ միջոցին Արզումում մեծ իրարանցում եր տիրում: Սերասկերը, վոր իր պարտությունից հետո լեկել եր քաղաք, լուր եր տարածել, թե ոուսները կատարյալ պարտություն են կրել նրա յետեկից, արձակված գերիները բերել հասցըել եյին բնակիչներին կոմս Պասկեիչի կոչք: Փախստականները բացել եյին սերասկերի սուտը: Շուտով իմացել եյին, վոր սուսներն արագորեն մոտենաւ են: Ժողովուրդն սկսել եր խոսել անձնատուր լինելու մասին: Սերասկերին ու զորքը մտածում եյին պաշտպանվել: Տեղի յեր ունեցել խռովություն: Մի քանի ֆրանկ սպանվել են զայրացած ամբոխի կողմից:

Մեր ճամբարը (26-ի առավոտյան) լեկան պատգամավորներ ժողովրդի և սերասկերի կողմից: Որն անցավ բանակցու-

թյունների մեջ: Յերեկոյան ժամը 5-ին պատգամավորները վերադարձան Արզում և նրանց հետ գեներալ իշխան Բեկովիչը, վորը քաջ ծանոթ եր ասիական լեզուներին ու սովորություններին:

Մյուս որը առավոտյան մեր զորքն առաջ շարժվեց: Արզումի արևելյան կողմում, Թոփ-Դաղի բարձրության վրա, գտնվում եր թուրքական մի մարտկոցը: Զորագնդերը գնացին գեպի նա, թուրքական թնդանոթաձգությանը պատասխանելով թմրկահարությամբ և յերաժշտությամբ: Թուրքերը փախան և Թոփ-Դաղի գրավիած եր: Յես յեկա այնտեղ բանաստեղծ Յու <զեֆովիչի> հետ: Թողած մարտկոցում մենք դտանք կոմս Պասկեիչին իր ամրող շքախմբով: Սարի բարձունքից ձորակում մեր աչքերաջածվում եր Արզումին իր միջնաբերդով, մինարեթներով, կանաչ կտորներով՝ մեկը մյուսին կպած: Կոմսը ձիու վրա յեր՝ նրա առաջ գետնին նստած եյին թուրքական պատգամավորները, վորոնք բերել ելին քաղաքի բանալիները: Բայց Արզումում նկատվում եր հուզմունք: Հանկարծ քաղաքի պատնեշի վրա փայլկտեց կրակը, յերեաց ծուխը և ոումբերը թուան գեպի Թոփ-Դաղը: Նրանցից մի քանիսն անցան կոմս Պասկեիչի գլխի վրայով: Նույն ըոպելին Թոփ-Դաղ հասավ իշխան Բեկովիչը, վորն յերեկվանից գտնվում եր Արզումում բանակցությունների համար: Նա հայտնեց, վոր սերասկերն ու ժողովուրդը վաղուց համաձայն են անձնատուր լինելու, բայց վոր մի քանի անհնաղանդ արնաութներ Թոփիչ-Փաշայի առաջնորդությամբ, տիրացել են քաղաքի մարտկոցներին և խոսվություն են զցում: Գեներալները մոտեցան կոմսին և թույլավություն խնդրեցին, հարկագրելու թուրքական մարտկոցներին լուելու: Արզումի բարձրաստիճան մարդիկ, վոր սերասկերին հենց իրենց թնդանոթների կրակի տակ, կրկնեցին նույն խնդրիքը: Կոմսը մի առ ժամանակ դանդաղում եր: Վերջապես հրաման տվեց, ասելով: — Հերիք հիմարություն անեն: — Իսկույն մոտեցրին թնդանոթները, սկսեցին կրակել և թշնամու կրակոցը գնալով հանգարտեց: Մեր զորագնդերը գնացին գեպի Արզում և հունիսի 27-ին, Պոլտավայի ճակատամարտի տարեգարձի որը, յերեկոյան ժամը 6-ին սուսական դրոշը ծածանվում եր Արզումի միջնաբերդի վրա:

Ի <այեվսկին> գնաց քաղաք—յես ել գնացինքա հետ։ Մենք
մտանք քաղաք, վորը զարմանալի տեսարան եր ներկայացնում։
Թուրքերն իրենց տափակ կտուրներից մոայլ նայում եյին մեզ
վրա։ Հայերն աղմկելով վխառում եյին նեղ փողոցներում։ Նրանց
տղաները վաղում եյին մեր ձիերի առաջից, խաչակնքելով ու
կրկնելով.— Թրիստիան... Թրիստիան... Մենք մոտեցանք բերդին,
ուր մուտք եր գործում մեր հրետանին։ Մեծ զարմանքով յես
ալստեղ հանդիպեցի իմ Արտեմին, վորն արդեն շրջագայում եր
քաղաքում, չնայած լինու հրամանին, վոր վոչ վոք ճամբարից
չբացակայի առանց հատուկ թույլտվության։

Քաղաքի փողոցները նեղ են ու ծուռ։ Տները բավական
բարձր են։ Ժողովուրդը շատ ե—խանութները փակ են։ Մնալով
քաղաքում մոտ յերկու ժամ, յես վերադարձա ճամբար։ Սերաս-
կիրն ու չորս փաշաները, վոր գերի եյին ընկել, արդեն այստեղ
եյին գտնվում։ Փաշաներից մեկը, մի վախտ, սարսափելի ան-
հանդիսա ծերուկ աշխույժ խոսում եր մեր գեներալների հետ։
Տեսնելով ինձ ֆրակով, նա հարցըեց, թե յես ով եմ։ Պ <ուշինը>
ինձ բանաստեղծի տիտղոս ավեց։ Փաշան ձեռքերը ծալեց կըրծ-
քին և գլուխ ավեց ինձ, թարգմանի միջոցով ասելով—Որհնյալ
և այն ժամը, յերբ հանդիպում ենք բանաստեղծի, բանաստեղծը
դերվիշին յեղբար ե։ Նա չունի վոչ հայրենիք, վոչ յերկրա-
յին բարիքներ. և այն միջոցին, յերբ մենք, խեղճերս, հոգում
ենք փառքի, իշխանության, գանձի մասին, նա հավասար և
յերկրի տիրականերին և նրան յերկրագում են։

Փաշայի արևելյան վողջույնի այս խոսքերը մեղ բոլորիս
շատ դուր ցեկան։ Յես գնացի սերասկիրին տեսնելու։ Նրա վը-
րանի մուտքի մոտ յես հանդիպեցի նրա սիրելի մանկավիկին,
տառնչորս տարեկան սևաչյա մի տղայի, հարուստ արնաութա-
կան զգեստով։ Սերասկիրը մի սպիտակահեր ծերունի յեր, ամե-
նասովորական արտաքինով, նստած եր խորը վհատության մեջ։
Նրա շուրջը խմբվել ելին մեր սպաները։ Դուրս գալով
նրա վրանից, յես տեսա մի յերիտասարդ, վորը կիսամերկ եր,
վոչխարի մորթե գլխարկով, մի մեծ մահակ ձեռքին և մի պարկ
ուսին։ Նա բղավում եր ամբողջ կոկորդովը մեկ։ Ինձ ասացին,
վոր դա իմ յեղբարակիցն ե, դերվիշ ե, վոր յեկել և վողջու-
նելու հաղթողներին։ Նրան հազիվ հազ դեն քշեցին։

ԳԼՈՒԽ ՀԻՄԿԵՐՈՒԴԻ

Արզում։ Ասիական ճոխություն։ Կիման։ Գերեզմանատները։ Սատիրական
վոտանավորներ։ Սերասկիրի աղարանքը։ Թուրք փաշայի հարեմը։ Ժան-
տախա։ Բուրցովի մահը։ Մեկնում Արզումից։ Վերադարձ։ Ռուսական ժուր-
նալ։

Արզումը (վորը սիալբար կոչվում ե Արզերում, Երզում, — Հրայրական ժուրնալ) հիմնված ե մոտավորակես 415 թվին Թեոդոսիոս Յերկ-
ըրդի ժամանակ և կոչվում ե Թեոդոսիոպոլիս։ Վոչ մի պատմա-
կան հիշողություն չի կապվում նրա անվան հետ։ Յես նրա մա-
սին գիտեյի միայն այն, վոր այստեղ, Հաջի Բաբայի վկայու-
թյամբ, պարսից դեսպանին, ի հատուցումն ինչ վոր վիրավո-
րանքի, մարդու ականջների փոխարեն, մատուցված են յեղել
հորթի ականջներ։

Արզումը համարվում ե Ասիական Թուրքիայի գլխավոր
քաղաքը։ Նրա մեջ հաշվում եյին 100.000 բնակիչ, բայց թվում ե,
թե այդ թիվը չափազանց մեծացրած ե։ Նրա տները քարից են,
կտուրները ծածկված են ձիմով, վոր քաղաքին չափազանց տա-
րորինակ տեսք ե տալիս, յերբ նայում ես նրա վրա բարձրից։

Գլխավոր ցամաքային առեստուրը Յեվրոպայի և Արևելքի
միջև կատարվում ե Արզումի վրայով։ Բայց նրա մեջ ապրանք
քիչ ե ծախվում, այստեղ ապրանքը դուրս չեն հանում, մի բան,
վոր նկատել ե նաև Ծուլնֆորը, վորը գրում ե, թե Արզումում ու
հիմնվը կարող է մեռնել մի գղալ խաշնդեղ գտնելու հնարավո-
րություն, չունենալով, այն ինչ քաղաքում ամբողջ պարկերով
կա դրանից։

Զգիտեմ մի արտահայտություն, վորն ավելի անմիտ լի-
ներ քան ասիական ճոխություն բառերը։ Այդ գարձվածքը յե-
րեվի ստեղծվել ե խաչակրաց արշավանքների ժամանակ, յերբ

աղքատ ասպետները, թողնելով իրենց դղյակների մերկ պատերն ու կաղնու աթոռները, առաջին անգամ տեսել են կարմիր բաղմոցներ, յերփներանգ գորգեր և դաշույններ՝ գուշավոր քարերով զարդարված դաստապաններով։ Այժմ կարելի յե ասել. — ասիական աղքատություն, ասիական խողություն եւ այլ ճոխությունն ի հարկե պատկանում ե Յեվրոպային։ Արզրումում վոչ մի գնով չի կարելի զնել աւն, ինչ դուք կդանեք Պակովի նահանգի առաջին պատահած գալառական քաղաքի մանրավաճառի կրպակում։

Արզրումի կլիման խիստ ե. Քաղաքը շինված ե ձորակում, վորը 7000 ֆուտ բարձր ե ծովից։ Նրա շուրջը գտնվող լեռները տարվա մեծ մասը ծածկված են լինում ձյունով։ Հողն անտառազուրկ ե, բայց բերրի յե։ Նա վոռոգված ե բազմաթիվ աղբյուրներով և ամեն կողմից խաչհատված ե ջրանցքներով։ Արզրումը հոչակված ե իր ջրով, Յեփրատը հոսում ե քաղաքից լերեք վերսու հեռավորության վրա։ Աղբյուրներ ամեն տեղ շատ կան։ Յուրաքանչյուրի մոտ կախված ե շղթայի վրա թիթեղի գավաթ և բարի մուսուլմանները խմում են ու գովելուց չեն դադարում։ Անտառանլութը բերվում ե Սողանլույից։

Արզրումի զինանցում գտնվեցին մեծ քանակությամբ հին զենքեր, սաղավարտներ, զրահներ, թրեր, վորոնք ժանգոտում են յերեկի գոտիքեղի ժամանակներից։

Մեջիտները ցածր են և մութ։ Քաղաքից դուրս գտնվում ե գերեզմանատունը։ Հուշարձանները սովորաբար քարե չալմայով զարդարված են։ Յերկու թե յերեք փաշաների դամբարաններ աշքի յեն լնկնում ավելի մեծ ճարտարահյուսությամբ, սակայն նրանց մեջ չկա նրբագեղություն, չկա վոչ ճաշակ, վոչ ել միտք... Մի ճանապարհորդ գրում ե, վոր բոլոր ասիական քաղաքներից միայն Արզրումում նա գտել ե մի աշտարակի ժամացույց, և այն ել փչացած։

Այն նորամուծությունները, վոր սկսել ե սուլթանը, դեռ մուտք չեն գործել Արզրում։ Զորքը գեռ ևս կրում ե իր գեղեցիկ արևելյան զգեստը։ Արզրումի և Կոստանտինոպոլսի միջև գոյություն ունի մըցություն, ինչպես Կապանի և Մոսկվայի միջև։ Ահա յենիշերի Ամին-Ռոլույի հորինած սատիրական պոեմի սկիզբը։

Գյավուրներն են Ստամբուլը հիմա գովում, Վաղն ել հանկարծ յերկաթապատ կրունկով, Ինչպես քնած ոձի՝ կըտրորեն նրան թագուն, Հետո նորից կհեռանան, ու այդպես կթողնեն։ Ստամբուլն ե քնած ահա խորը քնով։

Հրաժարվել ե Ստամբուլը մարգարեյից, Արեգելքի ալն ճշմարիտ հին որենքից, Վորին այն նենդ արևմտաքը խավարեցրեց, Յեվ մոլության քաղցրությանը նա մասնակից, Աղոթքներին և իր թրին դավաճանեց։ Ստամբուլը գոռ մարտերում ել չի քրտնում, Աղոթքի տեղ նա գինի յե հիմա խմում։

Հույս-հավատքի մաքուր բոցն ե մեջը հանգչում, Յեվ կանայք են գերեզմանոց մտնում, շրջում, Պառավ կանայք վորոնում են ճամբարները, Տղամարդիկ են նրանց համար հարեմ բերում։ Յեվ քնած ե անդ կաշառված ծեր ներքինին։

Բայց այդպես չի Արզրումը լեռնաստանի, Բազմանամբա Արզրումը մեր անաղմուկ. Մենք չենք քնած ճոխության մեջ ամոթալի, Յեվ չենք հանում թասովը մեր փրփրալի Գինու միջից մոլուցք, կրակ կամ թե աղմուկ։

Պաս ենք պահում։ Փայլուն շիթով ժուժկալ և ցայտ Սուլբ Ջրերն են մեր ծարավը աստ հագեցնում։ Յեվ խմբերով միշտ անսարսուռ, ժիր ու զվարթ Զիգիթներն են դեպի կորի արագ թոչում։ Ճարեմներն են մեր անառիկ, անմատչելի, Մեր ներքինիք անկաշառ են, խիստ ավելի, Յեվ կանայք են անդավաճան ալնտեղ մնում *):

*) Թարգմ. Հռ. Պողոսյանի.

Յես ապրում եյի Սերասկիրի ապարանքում, այն սենյակ-ներում, ուր տեղավորված եր յեղել հարեմը: Ամբողջ որը թափառում եյի յես անթիվ անցարաններով, սենյակից սենյակ-կտուրից կտուր, սանդուխքից սանդուխք: Ապարանքը թալան-ված եր թվում: Սերասկիրը մտադրություն ունենալով փախչել-դուրս եր տարել այնտեղից ինչ վոր կարողացել եր: Բազմոց-ների յերեսները պատառուված եյին, գորգերը հանված: Յերբ յես զբոսնում եյի քաղաքում, թուրքերը կանչում ելին ինձ և ցույց եյին տալիս լեզուն (նրանք ամեն մի ֆրանկի բժշկի տեղ-եյին ընդունում): Դա ինձ ձանձրացրեց, յես պատրաստ եյի նույն ձեռվ նրանց պատասխանել: Յերեկոները յես անց եյի կացնում խելոք և սիրալիր Ա <ուխորուկովի> հետ. մեր պարապ-մունքների նմանությունը մեզ մոտեցնում եր: Նա պատմում եր ինձ իր գրական մտադրությունների մասին, իր պատմա-կան հետախուզումների մասին, վոր մի ժամանակ նա-սկել եր այնպիսի յեռանդով և հաջողությամբ: Նրա իղձերի և պահանջների չափավորությունը իսկամես վոր սրտաշարժ ե: Ափսոս կլինի, յեթե նրանք չկատարվեն:

Սերասկիրի ապարանքը հավիտյան աշխուց տեսարան եր-ներկայացնում: Այնտեղ, ուր մոայլ փաշան լւելյան ծխում եր-իր կանանց ու անարդ մանկավիկների շրջանում, այնտեղ նը-րան հաղթողը ստանում եր զեկուցներ իր գեներալների հաղ-թությունների մասին, բաժանում եր փաշավիկներ, զրույց եր-անում նոր ոռմանների մասին: Մշտ փաշան յեկել եր կոմս Պաս-կեիչի մոտ խնդրելու նրանից իր յեղբորորդու տեղը: Շրջելով ա-պարանքը, ծանրակշիռ թուրքը կանդ առավ սենյակներից մեկում, աշխուժությամբ ասաց մի քանի խոսք, և հետո մտածմունքի-մեջ ընկալ: — այդ նույն սենյակում դլխատված ե յեղել նրա հայրը սերասկիրի հրամանով: Ահա իսկական արևելյան տպա-վորություններ: Հոչակավոր Բեյ-Բուլաթը, կովկասի ահն ու սար-սափը, յեկել եր Արզրում չերքեղական այն գյուղերի յերկու-ավագների հետ, վորոնք ապաստամբվել եյին վերջին պատերազմ-ների ժամանակ: Նրանք ճաշում ելին կոմս Պասկեիչի մոտ: Բեյ-Բուլաթը մոտ 35 տարեկան տղամարդ ե՝ ցածրահասակ ու լայնաթիկունք: Նա ուսւերեն չի խոսում, կամ ձեւացնում ե, թե չի խոսում: Նրա Արզրում գալն ինձ շատ ուրախացրեց: — այդ արդեն ինձ համար յերաշխիք եր, վոր անվտանգ կարելի կլի-նի անցնել լեռներն ու Կաբարդան:

Ոսման-Փաշան, վոր գերի յեր վերցված Արզրումի մոսա-և թիֆլիս եր ուղարկված սերասկիրի հետ, ինդրել եր կոմս Պասկեիչին Արզրումում թողած իր հարեմն անվտանգ պահելու-մասին: Առաջին որերն այդ մասին մոռացել եյին: Մի անգամ ճաշի ժամանակ, խոսելով մուսուլմանական քաղաքի հանդար-տության մասին, վորը գրավված եր 10000 զորքով, և վորի մեջ վոչ մի ընակիչ վոչ մի անգամ չեր գանգատվել զինվորի-ըստության մասին, կոմսը մտաքերեց Ոսման-Փաշայի հարեմը և հրամայեց պ. Ա <բրամովիչին> գնալ փաշայի տունը և հարցը-նել նրա կանանցից, թե արդյո՞ք գոհ են նրանք և չի յեղել արդյոք վորսե վիրավորանք: Յես թույլտվություն խնդրեցի ուղեկցել պ. Ա <բրամովիչին>: Մենք գնացինք: Պ. Ա <բրամո-վիչը> վերցրեց իր հետ վորպես թարգման մի ոռւս սպա, վորի պատմությունը հետաքրքիր ե: 18 տարեկան հասակում նա գե-րի յեր ընկել պարսիկների մոտ: Նրան ամորձատել եյին և ավել-լի քան 20 տարի նա ծառայել եր վորպես ներքինի շահի վորդի-ներից մեկի հարեմում: Նա իր զիբախտության մասին, և Պարս-կաստանում զարած իր կյանքի մասին պատմում եր սրտաշարժ-պարզամտությամբ: Ֆիզիոլոգիական տեսակետից նրա ցուց-մունքները թանգարժեք ելին:

Մենք յեկանք Ոսման-Փաշայի տունը: Մեղ ներս տարան-մի բաց, շատ կարգին, նույնիսկ ճաշակով սարքված սեն-յակ, — գունավոր լուսամուտների վրա ուրվագծված եյին Ղորա-նեց վերցված մակագրություններ: Նրանցից մեկն ինձ շատ-խորամիտ թվաց մուսուլմանական հարեմի համար: — Ինզ վայել ե կտավել յեվ արձակել: Մեղ մատուցեցին սուրճ պստիկ արծաթա-պատ թասիկներով: Մի ծերունի՝ սպիտակ պատկառելի միրուքով, Ոսման-Փաշայի հայրը, յեկավ կանանց անունից շնորհակալու-թյուն հայտնելու կոմս Պասկեիչին, բայց Ա <բրամովիչն> ասաց կտրականապես, վոր նա ուղարկված ե Ոսման-Փաշայի կանանց մոտ և ուզում ե նրանց տեսնել վորպեսզի հենց նրանցից հա-վաստիանա, վոր նրանք ամուսնու բացակայությամբ ամեն բա-նից գոհ են: Հազիկ պարսկական գերին կարողացավ այս բոլորը թարգմանել, յերբ ծերունին ի նշան զայրույթի չըթացրեց լեզ-վով և հայտնեց, վոր վոչ մի կերպ չի կարող համաձայնել մեր պահանջին, և վոր յեթե փաշան, յերբ վերադառնա, իմանա, վոր ոտար տղամարդիկ տեսել են նրա կանանց, ապա և նրա ծերու-

նու, և հարեմի բոլոր ծառաների գլուխը կտրել կտա:—Ծառաները, վորոնց մեջ վոչ մի ներքինի չկազ, հաստատեցին ծերունու խոսքերը, բայց պ. Ա. <բրամովիչը> անհողողդ եր: Դուք վախենում եք ձեր փաշալից,—ասաց նա նրանց, իսկ յես իմ սերասկիրից, և չեմ համարձակվի չանսալ նրա հրամաններին:—Բայ չեր մուռմ անելու: Մեզ տարան պարտեզով, ուր խփում եյին յերկու վտիտ շատրվաններ: Մենք մոտեցանք մի փոքրիկ քարե շինության: Ծերունին կանգնեց մեր և դուն միջն, զգուշությամբ այն բաց արեց, ձեռքից բաց չթողնելով դռնափակը, և մենք տեսանք մի կին՝ գլխից մինչև գեղին բարուճները սպիտակ չաղրայով: Մեր թարգմանը կրնեց նրա հարցումը.—մենք լսեցինք յոթանասունամյա պառավի սվավոցը: Պ. Ա. <բրամովիչը> ընդհատեց նրան.—Սա փաշայի մալրն ե, ասաց նա, իսկ յես ուղարկված եմ նրա կանանց մոտ, բերեք նրանցից մեկին: Բոլորը զարմացան գյավուրների կռահումից, պառավը գնաց և մի բողեյից վերադարձավ մի կնոջ հետ, վորը ծածկված եր նույնպես, ինչպես և ինքը, — ծածկոցի տակից հնչեց յերիտասարդ հաճելի ձախնիկ: Նա շնորհակալություն եր հայտնում կոմսին նրա ուշագրության համար — դեպի խեղճ այրիները, և գովում եր ուուսների վարվողությունը: Պ. Ա. <բրամովիչը> վարպետորեն յերկարացրեց խոսակցությունը նրա հետ: Այդ միջոցին յես, շուրջս նայելիս, հանկարծ տեսա հենց դուն վերեռում մի կլոր պատուհան, և այդ կլոր պատուհանում հինգ թե վեց կլոր գլուխներ, սե, հետաքրքրվող աչքերով: Յես մի ուզում եյի հաղորդել գյուտիս մասին պ. Ա. <բրամովիչին>, բայց գլխիկները նշան արին, աչքով արին, մի քանի մատներ սկսեցին ինձ սպառնալ, վոր յես լուեմ: Յես հնապանդվեցի և գյուտիցս բաժին չհանեցի ուրիշին: Նրանք բոլորն ել դուրեկան գեմք ունեցին, բայց վոչ մեկն ել գեղեցկուհի չեր: Այն մեկը, վոր դուն մոտ խոսում եր պ. Ա. <բրամովիչի> հետ, յերեմի հարեմի վարդ տիրուհին եր, սրտերի գանձանոցը — սիրո վարդը — գոնե, յես այդպես եյի յերեակայում:

Վերջապես պ. <Արրամովիչը> վերջացրեց իր հարցուփորձը: Դուռը փակվեց: Պատուհանի դեմքերն անհետացան: Մենք դիտեցինք պարտեզը, տունը և վերադարձանք շատ գոհ մեր առաքելությունից:

Այդպիսով յես հարեմ տեսա — դա հաղվաղեալ յեվրոպացու յե հաջողվել: Ահա ձեզ մի հիմք արևելան ոոմանի համար:

Պատերազմը վերջացած եր յերեում: Յես պատրաստվում եյի վերադառնալու: Հուլիսի 14-ին յես գնացի ժողովրդական բաղանիք և արևս խավարեց: Յես անիծում եյի սավանների անմաքրությունը, վատ սպասավորումն, և այլն: Ինչպես կարելի յե համեմատել Արզումիքը Թիֆլիսի հետ:

Վերադառնալով ապարանք, յես իմացա պահակում կանգնած կ <ոնովնիցինից>, վոր Արզումում ժանտախտ ե հայտաբերվել: Սուած իսկույն պատկերացան կարանտինի սարսափները, և յես նույն որը վճռեցի թողնել բանակը: Ժանտախտի ներկայության մասին մտածելը շատ անախորժ բան ե անսովորությունից: Յանկանալով ջնջել արդ տպավորությունը, յես գնացի զբունելու շուկան: Կանգնելով զինագործի կրպակի մոտ, յես սկսեցի դիտել մի ինչ վոր դաշույն, յերբ հանկարծ մեկը խփեց ուսիս: Յես յետ նայեցի: — իմ յետեկին կանգնած եր մի զարհուրեկի աղքատ: Նա մահու չափ գունատ եր, կարմիր ճշպոտ աչքերից արտասուլք եր հոսում: Նորից յերևակայության մեջ ծագեց ժանտախտը: Յես դեն հրեցի աղքատին անսաելի զզվանքի զգացմունքով, և վերադարձա տուն զբուանքիցն շատ գժգոն:

Հետաքրքրությունը, սակայն, հաղթեց — մյուս որը յես բժշկի հետ գնացի այն ճամբարը, ուր գտնվում եյին ժանտախտավորները: Յես չիջա ձիուց և նախազգուշության համար կանգնեցի քամու ուղղությամբ: Վրանից մեր առաջը դուրս բերին մի հիվանդի: Նա չափազանց գունատ եր և յերեռում եր հարբածի պես: Մեկ ուրիշ հիվանդ ընկած եր ուշաթափ:

Դիտելով ժանտախտավորին և խոստանալով խեղճին շուտ ապաքինում, յես ուշագրություն դարձրի այն յերկու թուրքերի վրա, վորոնք նրան դուրս եյին բերում թեւերից բռնած, շորերը հանում եյին, շոշափում եյին, կարծես թե ժանտախտը վոչ այլ ինչ ե քան հարբուխը: Խոստովանում եմ, յես ամաչեցի իմ յեվրոպական յերկուտեղյունից այդպիսի անտարբերության առաջությամբ և շուտ վերադարձա քաղաք:

Հուլիսի 19-ին կոմս Պասկեիչի մոտ գալով նրան հրաժեշտ տալու, յես գտա նրան իմաստ գառնացած վիճակում: Ստացվել եր վշտակի լուր այն մասին, վոր գեներալ Բուրցովը սպանվել ե Բայրութի մոտ: Ափոս յեղավ քաջարի Բուրցովը, բայց այդ գեպը կարող ե կորստաբեր լինել և մեր ամբողջ փոքրաթիվ

զորքի համար, վորը խորն եր անցել ոտար յերկրի մեջ և շրջապատված եր թշնամական ժողովուրդներով, վորոնք պատրաստեյին ապստամբել հենց առաջին անհաջողության լուրը ոտանալուն պես: Ուրեմն, պատերազմը վերսկավում եր: Կոմոն առաջարկում եր ինձ ականատես լինել հետագա ձեռնարկումներին: Բայց յես շտապում եյի Ռուսաստան... Կոմսը նվիրեց ինձ ի հիշատակ մի թուրքական թուրբ: Յես այն պահում եմ վորպես հիշատակ փայլուն հերոսի հետքով Հայաստանի նվաճված անապատներում կատարած իմ թափառումների: Նույն որը յես թողի Արզումը:


Յես յետ եյի դասնում Թիֆլիս արգեն ինձ ծանոթ ճանապարհով: Այն վայրերը, վոր գեռ նորերս կենդանացած եյին 15000 զորքի ներկայությամբ, լուր եյին և տրտում: Յես անցանողանուղը և հազիվ կարողացա ճանաչել այն տեղը, ուր կանգնած եր ճամբարը: Գումբիում յես յերեքորյան կարանտին պահեցի: Նորից տեսա յես Բղովդալը և թողի սառը Հայաստանի բարձր գաշտավայրերը տոթակեղ Վրաստանի համար: Թիֆլիս հասա ոգոստոսի 1-ին: Այստեղ մնացի յես մի քանի որ սիրալիր և ուրախ մարդկանց շրջանում: Մի քանի յերեկո յես անցկացրի այգիներում վրացական յերաժշտության հնչյուններ և յերգելսելով: Յես շարունակեցի ճանապարհու: Լեռներն անցնելն ինձ համար նշանակալից եր նրանով, վոր Կորիի մոտ գիշերը յես փոթորկի տակ ընկա: Առավոտան Կազբեկի մոտով անցնելիս, յես տեսա հրաշալի տեսարան: Սպիտակ, պատառուված ամպերը անցնում եյին սարի գագաթով, և մեկուսացած վանքը, արևի ճառագայթներով լուսավորված, թվում եր թե մղվելով ամպերից լուղում և ողի մեջ: Կատաղի հեղեղատը նույնպես ինձ ներկայացալիքը մեծող մեծությամբ: — անձրեկի ջրերով լցված ձորը գերազանցում եր իր ամենությամբ նույնիսկ Թերեքին, վորը հենց այդտեղ ահեղորեն մոնչում եր: Ամիերը պատառուվել եյին: ահագին քարեր տեղահան եյին լեղել ու բռնել հոսանքի առաջը: Բաղմաթիվ ոսեր մշակում եյին ճանապարհը: Յես անցա հաջողությամբ: Վերջապես յես գուրս լեկա նեղ կիրճից դեպի մեծ կամարդայի լայնարձակ դաշտավայրը: Վլադիկավկազում յես գտա՞ Պ <որոխովին> և Պ <ուշինին>: Յերկուսն ել գնում եյին ջրերը բուժվելու արշավանքում ստացած վերքերից: Պ <ուշինին> մոտ սեղանի վրա յես գտա ոռւսական ժուրնալներ: Առաջին հոդվածը:

վոր աչքովս ընկավ իմ յերկերից մեկի քննադատությունն եր: Նրա մեջ ամեն կերպ հայնում ելին ինձ և իմ վոտանավորները: Յես սկսեցի այն կարդալ բարձրաձայն: Պ <ուշինը> կանգնեցրեց ինձ, պահանջելով, վոր յես կարդամ ավելի բարձր միմիկական արվեստով: Պետք ե խմանալ, վոր վերլուծությունը զարդարված եր մեր քննադատության սովորական հերիուրանքներով: — դա մի խոսակցություն եր տիրացույի, նշանագործունու և տպարանի սրբագրելիք՝ այս փոքրիկ կոմեդիայի Զերավոմիսի հետ: Պ <ուշինին> պահանջն ինձ այնքան զվարճալի թվաց, վորժուրնալի հոդվածի ընթերցմամբ ինձ պատճառած վրդովմունքը, բոլորվին անցավ, և մենք անկեղծ սրտով հռհռացինք:

Այդ եր ինձ տված առաջինը սիրեցյալ հայրենիքում:

<1836>



Թարգմանիչ՝ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Պատ. ԽԱՐԱԳԻՐ՝ 
Տիտղոսաթերթ՝ Հ. ՇԱԿԱՐՅԱ
Տեխ. ԽԱՐԱԳԻՐ՝ Լ. ՈՉԱՆՅԱՆ
Սրբադրիչներ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Հ. ԴՈԼՈՒՆՅԱՆ

Հանձնված ե արտադրության 19 նոյեմբ. 1936 թ.,
Սառըագրված ե տպադրության 20 դեկտեմբ. 1936 թ.
Գլավլիահ լիազոր Ա. 1178
Հաստարակչ. 3942, Պատկեր 1405,
Տրամագիստ 4000:


Գետի ապարան, Յերևան, Խ Գնունյանցի, Ա 4.

ՊՈՒՏԵՎԻՐ ՃԱԿԱՊՑՐՈՒԹՈՒԹՅՈՒՆ
ԴԵՊԻ ԵՐՋԵՐՈՒՄ
ПУТЕШЕСТВИЕ ПУШКИНА
В ЭРЗЕРУМ

ԿԱԶՄ. ԱՏ.ԼԻՍԻՒԹՅԱՆ

1829

сост. С. Аисициан





ՀՀ Ազգային գրադարան



NL0311711

